VII Mechitharistengasse 4.

ՄԵԽԻԹԱՐԵԱՆ

ՄԱՄՈՒԼ,

ԱՄՍԱԹԵՐՔ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1892

ՄԱՅԻՍ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԵԼՈՒԿ ՄԸ	193
ՎԵՆԵՏԵԱՆ Վ. ՀԻՇԵՆԴՐՈՒԹԻՒՆ	203
ՊԱՐՆԵՆԿՈՏՈՒԹԻՒՆ	207
ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՐՆԵՆԿՈՏՈՒԹԻՒՆ	210
ԳՅՂԳՈԹԱՒ ՍՏՈՐՈՏԸՆ	213
ՀՆՉԵԱԿ	219
ՉԸ ԻՆՉ ՊԷՏՔ ԲՆԱՒ	220
ԱՆՄԷՂ ՍԻՐՏ	221
ՓՇՐԱՆՔ	222
ԻՆՔՆԱՐԵՐ ՀԵՐՔՈՒՄ ՄԸ	223
ԱՄԱՍԻՈՅ ՀԱՅՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ	226
ՄՏԱԾԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ (Լ—)	230
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ (Շ—ր)	233
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ	236
ԼՐԱԲԱՂ	240

ՀԱՄԱՐՈՒԹԻՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒԼԵԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՄԱՑՐ ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԵՐԷՆ ՀԵՌԱԳՐԱՑ

Հրատարակեալ ի Մխիթարեան Միաբանութենէ

Հատոր Ա.

ԱԽՍՏՐԻԱ

Տետր Ա.

Յուցակ հայերէն ձեռագրաց կայսերական Մատենադարանին

Ի ՎԻԵՆՆԱ Գին 1, 80 Ֆր.

ԱՐՇԱԼՈՅՍԻ ՀԱՅՆԵՐ

Տաղեր, պատկերներ, արձակ բանասիրական-բարեբանութիւններ, հանդիպականներ

Հեղինակ

ԱՐՇԱԿ ՀՈՎԱՆԵԱՆ (ՖԱՆԻՊԱՂԷՏ)

Կ. Պոլիս տպր. Թ. Սանճագեան — 1891 — Գին 10 դր. արծաթ

ԱՌՏՆԻՆ

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Յօդուածք

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս Տպագր. Ն. Կ. Պէրպէրեան. Գին 8 դահեկան արծաթ.

ՓՈՒՆՋ ԳԻՏԱԿԱՆ

Գրեց

ՏՕԹԹԷՕՐ Կ. Յ. ՓՍՇԱԵԱՆ

Հատոր Ա.

Կ. Պոլիս Տպագր. Ն. Կ. Պէրպէրեան. Գին 5 դահեկան

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեղինակ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅԱՏՈՒՐԵԱՆ

Հրատարակեց ԱՐԺ. ԺԱՄՀԱՐԵԱՆ, Մոսկուա. 1891. Գին 40 Կ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԸՋԳԱՑԻՆ ԵՒ ՓԱՌԱՓԱԿԱՆ

ԻՐ. ՏԱՐԻ 1892 ՄԱՑԻՍ

ՀԱՆԵԼՈՒԿ ՄԸ

ԳԼՈՒԽ Ը.

ՆՈՐԱՏԻ ՈՍՏԻԿԱՆ ՄԸ

Ֆիլ ոսկրուտ, չորաթեկ պզտիկ տղայ մ'էր, Լանտօնի խըշտիքի մը մէջ ծնած ու մեծցած. չունէր նա ծնողք — գէթ չէր յիշեր բնաւ իր հայրն ու մայրն, և երբ հարց ու փորձ ընէին իրեն թէ ինչպէս եկած է աշխարհ, թերևս պատասխանէր թէ սունկի պէս բուսած էւ Իր հայրն ու մայրն, երբ դեռ մանկիկ մ'էր Ֆիլիբ, երեսի վրայ թողած էին գինք և ոչ իսկ անուն մը տալով իրեն, ուստի նա ընկաւ երկրի վրայ իբրև լակման լակոտ մը։ Սակայն Ֆիլիբ կերպով մը կարող եղաւ տասն հինգ տարին բռնել և բաղդն այնպէս բերաւ որ այս հասակին մէջ Տովքը իր առջևն ելնելով Ֆիլիբ քիչ մ'ոգի տուաւ։

Տովքը իր արտաքին անտաշ մարմնոյն ներքև բարի սիրտ մը կ'պահէր։ Անձրևոտ գիշեր մը Ֆիլիբ հանդիպեր և մարդկային այս թշուառ բեկորին վրայ գթալով թաս մը սուրճ և կտոր մը հաց

անոր մեծարեր էր, որպէս զի սովալլուկ չմեռնի։ Այս անչահախնդիր բարեսիրեան վրայ սիրտը չարժելով՝ Ֆլիբ չատ հաւատարմութեամբ կապուեր էր ոտիկանին և պատրաստ էր ձեռքէն եկած ծառայութիւնն ընել։

Աչխարհիս մէջ ինքն իր դլխուն ճամբայ մը դտնելու ճգնելով՝ Ֆլիբ կանուխէն մտքի զարմանալի սրութիւն մը ստացեր էր, և Տովքր անոր սովակիրթ բնազդէն օդուտ քաղած էր, վասն զի չատ անգամ այդ պզտիկ լակոտը կ'ուղարկէր կառքերու ետևէն, և անոր մանր մունր գործեր կ'յանձնէր։ Ֆլիբ այնքան լաւ և արագ կ'կատարէր իրեն տրուած պատուէրներն որ Տովքր սկսաւ անոր հոգը տանիլ և մշակել այս թռուամած ծաղիկն որ բուսեր էր անշահ փուչերու մէջ։ Տրիւրի Լէյն իրենց ժամադրութեան տեղն էր և երբ Տովքր պէտք ունենար այն տեղ կ'երթար Ֆլիբը փնտռելու։ Ֆլիբ իր պաշտպանին հրահանգներն ուշադիր մտիկ կ'ընէր և անմնակ այլ սերտ յիշողութիւն մ'ունենալով՝ երբէք չէր մոռնար ինչ որ իրեն ըսէին։ Այս ծառայութեանց փոխարէն Տովքր ամեն չաբաթ չիլին մը կ'տար անոր և ահա այս չնչին գումարով և պատահական նպաստներով կը ջանար ապրիլ։

Տովքր չուզեց ոչ դաստիարակել Ֆլիբն և ոչ վայելուչ կերպով հագուեցնել վասն զի նա կարծէր թէ կրթութիւնն ու ըզդեստը կրնային խանգարել իր բնազդն ու կերպարանն որ իրենց այս կոչտ վիճակին մէջ էապէս օգտակար էին. ուստի խեղճ Ֆլիբ տգէտ ու հնոտի հագուստներով մնաց, թէև Տովքր մտադիր է անոր չահաւէտ պաշտօն մը տալ երբ որ տարիքն առնէր։

Այս տղուն անունն էր լոկ Ֆլիբ, և այս անուան ծագումը գաղտնիք մ'էր — իր միակ հագուստն էին լայնարձակ տաբատ և պատառուն չապիկ — իսկ իր բնակարանն էր ազմկալի քարայր մը Տրիւրի Լէյնի շրջակայքը։ Անչահ էր իր լեզուն, նոյնպէս իր վարքը, սակայն մարդկութեան այս թափթփուքն ունէր իր մէջ այնպիսի յատկութիւններ որով թերևս ընկերութեան մի օգտակար անդամը դառնար։ Այսպիսի ընդհեգիկ արարածներ չատ կան ի Լոնտոն, բայց Անգլիոյ երիտասարդներն լաւ ևս կ'համարին օգնել այնպիսի վայրենիներու որ իրենց օդնութենէ պէտք չունին քան թէ այն բնիկ վայրենիներուն որ պէտք ունին։ . .

. . . . . .

Ֆլիբ իր սովորական վայրը՝ սալարկին ծայրը նստած էր՝ ոտքն ջրուդիին մէջ դրած որ զովանայ, և աչքն երեք հատ աղտոտ բէնիներու վրայ տնկած, որ ափին մէջ էին։

— Ի՞նչ կրնամ գնել այս դրամով — կ'ըսէր Ֆլիբ, իր հարուստութեան վրայ խորհելով — կտոր մը հաց, քիչ մը դարեջուր և ապա . . . — երբ յանկարծ Տովքը իր ոտքով դպաւ անոր և Ֆլիբ տեղէն ցատկեց, ստակը դրպանը դնելով։

— Ի՞նչ հրաման ունիք, տէր իմ — ըսաւ Ֆլիբ անախորժ ակնարկ մը նետելով Տովքրի վրայ — միթէ նոր վաճառակ մը կայ. չատոնց որսի ելած չեմ . . ։

— Լուռ կեցիր — ըսաւ Տովքը խստիւ — քեզի գործ մ'ունիմ տալու — բայց նախ անօթի ես։

— Ո՛չ շատ — ըսաւ Ֆլիբ պաղութեամբ — բայց գէշ չվիներ եթէ քիչ մը միս ուտեմ։

Տովքը սուր ակնարկ մը նետեց այս փոքրիկ չքոտի սատանային որ իր քովէն կ'քալէր։

— Ո՞ւր գտար ստակ — հարցուց նա։

— Իրաւ որ աղէտ խաղ մ'էր—ըսաւ Ֆլիբ, իր չորցած ձեռները չվիելով՝ երբ միս ու էրիկ ծախող խանութպանի մը կողմը կ'դիմէին. — Ամեն բան պիտի պատմեմ քեզ։ Բայց առաջ սա ապուխտին ու հացին համն առնեմ։

Տովքրի չնորհիւ Ֆլիբ այս ուտելիքը ստացաւ և բերանը լեցնելով սկսաւ նաև խօսիլ։

— Անցած երկուշաբթի օր — ըսաւ նա։

— Հա՜ — յարեց Տովքր՝ յանկարծ յիշելով սպանութեան թուականը։ — Միթէ երէկ։

— Ո՛չ, առջի երկուշաբթի օր — յարեց Ֆլիբ — գիշեր էր. սոսկալի մշուշ մը կար։ Անօթի կ'մեռնէի. անկարելի էր ձեղ գտնել։ Ելայ Սոհօ թաղին կողմը զարկի որ մեր ծերուկ ձէմը, որ պանդոկ կ'պահէ, գտնեմ։

— Այո՛, կ'ճանչեմ։

— Մի և նոյն խաղն — ըսաւ Ֆլիբ — քիչ մը ստակ ուզելու։ Գացի պաղ միս, հաց, դարեջուր դնելու։ Երբ կերակուրս լափեցի և դուրս կ'ելնէի, պարոն մը ներս կ'մտնէր — խոշոր լորտ մը, մուշտակ կռնակին ու դլուխը փայլուն փեղկոյր։ Պանդոկի մարդուն կ'ըսէ. — Միթէ այս դիշերուան համար խուց մ'ունիմ։ — Այո՛, կ'պատասխանէ մարդը. սրահին մէջ։ — Լաւ, կ'ըսէ — տեսնել կ'ուզեմ. իմ գործանատես պիտի երթայի. բայց վաղուան պիտի թողում ուզեւորութիւնս։ — Ապա աչքը վրաս կը նետէ և կ'ըսէ. — Կ'մտնե՞մ — Այո՛, կ'ըսեմ։ — Անօթի ես։ — Ոչ շա՜տ. կ'պատասխանեմ։ — Ահա քեզի համար մէկ քանի սղինձ,

ողորմելի լակոտ։ — Ահա այս ստակով կրցայ ապրիլ մինչև այսօր — աղուոր խաղ չէ՞, տէր իմ։

Երբ Ֆիլիք այսպէս կ'շաղակրատէր Տովքր անուշադիր էր, մինչև որ լսեց գրօսանաւ բառն և ականջը անկեց։ վասն դի կարծեց թէ Ֆիլիքի այդ անծանօթ բարերարը կրնար լորտ Գալթգրէն լինիլ։

— Երկու շաբթի դիշեր քաղքէն սլիտի հեռանար — մրմնջեց Տովքր — բայց նա քալ մենամարտիկ մ'է. ուստի հաւանական է որ պանդոկը մնաց մենամարտի համար և հետևեալ առտու ձամբայ ելաւ։ Ձեմ հասկնար թէ ո՛ւր հանդիպեցաւ տիկին Պալքօմին։ Լաւ, այս յարաբերութիւն չունի բնաւ ոսկանուէհան հետ. ոսկան կ'փափաքէի իմանալ թէ արդեօք նոյն իրիկուն քաղքէն մեկնեցա՞ւ թէ ոչ։

Ապա դարձաւ Ֆիլիքի կողմն և յանկարծ հարցուց.

— Մի՞թէ լորտը տեսա՞ւ ձեզմը։

— Անշուշտ — ըսաւ Ֆիլիք. — և ձեր լորտ անուանեց զինքը։

— Լո՛րտ, — կրկնեց Տովքր մտմտալով. — ո՛հ, տարակոյս չկայ որ նա լորտ Գալթգրէն էր։ Թերևս մատ ունի իր սիրուհւոյն ապանութեան մէջ. չատ զարմանալի սլիտի թուի ինձ եթէ բնաւ լոր դիշեր քաղաքը մնաց և իր բնակարանը չգնաց։ ժամը քանիին պատահեցար այդ պարոնին — հարցուց նա բարձրաձայն։

— Շուրջ ժամն իննին — ըսաւ Ֆիլիք արագօրէն — կամ կէս ժամ անցած։

— Ի՛նն — կրկնեց Տովքր — ուրեմն նա քաղաքը մնացած է բոլոր դիշեր, քանի որ վերջին կառաչարը գրեթէ ժամը իննն ու կէսին կ'մեկնի։ Այս խնդիրը պիտի քննեմ, բայց նախ պարտաւոր եմ պ. Տիլմննտի գաղտնի խաղն երևան հանել։

Ֆիլիք արդէն աւարտած էր իր ճաշն և անհամբեր կ'սպասէր իր պետին հրահանգին։

— Ի՞նչ կայ ընելիք, տէր իմ — հարցուց նա, իր սև կլորիկ աչերն ոստիկանին վրայ սևեռած։

Տովքր ժամացոյցին նայեցաւ։

— Գրեթէ ժամն երկու է — ըսաւ նա — և կ'խնդրեմ որ երկքը քառորդ մնալով դաս գտնես պիս Մարպլ Արչի մօտ։

— Ի՞նչ գործի համար։

— Որպէս զի կամացուկ հետևիս օրիորդի մը և պարոնի մը և անոնց խօսածը գաղտնի մտիկ ընես — ըսաւ Տովքր։ Ես քեզ պիտի ցոյց տամ այդ անձերը։ Նայէ որ բառ մը անգամ չմոռնաս իրենց խօսակցութենէն, որպէս զի կարող լինիս հաղորդել ինձ։

— Ահա կ'երթամ կ'երթամ — ըսաւ Ֆիր՝ ակնթարթի մ'ընդ-
լով, և այսպէս սոյն երկու տարօրինակ ընկերներն իրարմէ բաժ-
նուեցան, Տովքր իր պաշտօնատունն գնալով մի քանի վայրկենի
համար, իսկ Ֆիր ժամադրութեան տեղը գտնուելու համար։

ԳԼՈՒԽ Թ.

ՍԻՐՈՑ ԼԵԶՈՒԻՆ

Մէյ Բէնֆօլտ չատ սիրուն օրիորդ մ'էր, բարձրհասակ և
ոսկեհեր, զոյդ մը զուարթագին աչերով և չքնաղ գոյնով։ Իր
ծնողքը մեռան. երբ դեռ ծաղկատի էր և թողին զինք լրտ
Ինիւերդ Պալքօմպի խնամակալութեան ներքև, անձ մ'որ իր
պաշտօնը աքանչելի կերպով կատարեց։ Նա դաստիարակել տուե-
աւ իր սանուհին մտապէս և ֆիզիքապէս, այնպէս որ երբ առա-
ջին անգամ անգլիական ընկերութեան մէջ երևցաւ ամեն
մարդ իր վրայ աքանչացում յայտնեց։ Իրրև կատարեալ երա-
ժիշտ և լեզուագէտ, իրրև վարժ ձիավար և բարի բնաւորու-
թեան տէր, զարմանք չէ եթէ այդ օրիորդն չատ հետամուտներ
ունեցաւ։ Բայց երբ այս ընտիր բարեմասնութեանց հետ յայտնի
եղաւ նաև թէ իրրև ժառանգուհին քսան հազար ոսկի տա-
րեկան եկամուտ ունի, եղանակին նշանաւոր մի որսը նկատուե-
ցաւ և աղնուական ընտանեաց պատանիներու կողմէ չատեր
անոր հետ ամուսնանալու փափաք յայտնեցին։

Բայց աւաղ, կանացի բնաւորութեան բերմամբ, օրիորդ Մէյ
այն ոսկեզօծ պատանիներէն և ոչ մին ընտրեց, այլ իր ուշադ-
րութիւնը ու սիրտը տուաւ Պ. Մայլս Տիզմօնտի, Իրլանտացի
աղքատիկ պարոն մ'որու միակ ձիրքն էին դեղանի դէմք մը,
ճարտար գլուխ մը և ուշիմ լեզու մը։ Ընդ ունայն լրտ Գալիս-
ղըն խնդրեց որ օրիորդ Մէյ զինք ընդունի իրրև ամուսին. օրի-
որդն պաղութեամբ մերժեց իր առաջարկն, յայտնելով վարմա-
նահար աղնուականին թէ իր բարքն ու վարքը բնաւ իր ճաշա-
կին չատմար չէին, և թէ ինք մտադիր էր ամուսնանալ Պ. Մայլս
Տիզմօնտի հետ։

Լրտ Գալիսղըն այս յայտարարութեան վրայ կրակ ու բոց
փչեց, և որովհետև օրիորդ Մէյ անչափահաս էր և չէր կարող
առանց իր խնամակալին հաւանութեան կարդուիլ, հրամայեց
որ Մայլս այնուհետև իր տունը չմտնէ և իր առ՝ուհին անոր

հետ չխօսի։ Բայց տէր միանգամ թէ ինչպէս սիրոյ հնարագիտութիւնը կարող է ի դերև հանել խնամակալներու հսկողութիւնը։ Օրիորդ Մէյ և Պ. Մայլս գաղտնի սկսան տեսնուիլ ուր որ յարմար դատէին՝ Բարքը, պարահանգէսներն և այնքան ճարպիկութեամբ կ՚պատրաստէին իրենց տեսակցութիւններն որ լորտ Ռուբերդ և ոչ վայրկեան մը կասկած ունեցաւ անոնց վերայ։ Նա կ՚վստահեր իրաւ, որ իր սանուհին լորտ Գալիսդընի հետ կարգուի, բայց երբ այս թեթևսոլիկ երիտասարդն տիկին Պալքօմպի հետ խոյս տուաւ, իր պիտաւորութիւնը փոխեց և եթէ օրիորդ Մէյ այս պարագայէն օգուտ քաղէր, անտարակոյս խնամակալը պիտի հաւանէր իր միութեան Պ. Մայլսի հետ՝ անտես առնելով անյարմարութիւնը։ Լորտ Պալքօմպ իր կնոջ դաւթակղական ընթացքին վրայ բոլորովին կայծակնահար մնաց։ Շատ կ՚սիրէր նա տիկին Պալքօմպը, և մանկական հասակէն Գալիսդընի ծանօթ լինելով բնաւ մտքէն չէր անցներ որ այսպիսի առևանգում մը կրնար պատահիլ։ Շատ հպարտ մարդ մ՚էր լորտ Պալքօմպ և երբ այս ցաւալի դէպքն իմացաւ փակուեցաւ իր գրատան մէջ՝ մերժելով ո և է անձի հետ տեսութիւն ընելու։ Մեղսապարտ ամէնները Աղոթեան կղզին գացած էին, և քալ գիտնալով որ վերջապէս պիտի դառնան Անգլիա, անոնց գալստեան սպասեց՝ իր դաւաճան կնոջմէ բաժնուելու և առևանգիչը պատժել տալու պիտաւորութեամբ։

Այսպէս լորտ Պալքօմպ այս վիճակն ընտրելով՝ օրիորդ Մէյ գրեթէ ինքնագլուխ մնաց, և որովհետև առևանգումն շատ մեծ գայթակղութիւն պատճառեց, նէ իրրև Պալքօմպի սանուհի՝ չուզեց յամառել ընկերական ակուժներ մինչև որ խնդիրը կարգի չմտնէր։ Նէ սոէպ գրած էր Պ. Մայլսի որ երթայ զինք տեսնէ, բայց միշտ պատրուակ մը գտնելով մերժեր էր կատարել օրիորդին խնդիրը՝ անհնարին զարմանք պատճառելով։ Ուսկի երբ օրիորդ Մէյ ընդունեց այն հեռագիրն որով կ՚խնդրուէր Պ. Մայլսը տեսնել Մարպլ Արչի մօտ, անչափ ուրախացաւ խեղճ օրիորդը։ Չեռևասէս Բարք Լէյնի տունէն դուրս սահելով՝ ժամադրութեան վայրը գնաց։

Տարուան այն եղանակին մէջ համեմատաբար քաղաքը քիչ մարդիկ կային որ զինք ճանչնային. սակայն՝ ապահովութեան համար, օրիորդ Մէյ պարզ մթագոյն հագուստներ հագաւ և խիտ քող մը ձգեց երեսին վրայ որպէս զի լիովին անծանօթ մնայ։ Այսպէս ծպտեալ՝ բնաւ երկիւղ մը չունէր աչքի զարնելու և

ժամադրավայրը հասաւ դրեթէ ժամն երեքն հինգ վայրկեան անցած։ Անդ դտաւ Պ. Մայլըն որ իրեն կ'սպասէր և միասին Բարքը մտան, բոլորովին վստահ թէ ոչ ոքիէ արդիւնքին և ոչ ճանչցուին։ Բայց չտեսան որ ստուերի մը պէս իրենց կ'հետևէր վոքրիկ, աղքատիկ տղայ մը։

Տովքը Պ. Մայլսը տեսնելով Ֆիլըի ցոյց տուաւ և իսկոյն թողուց գնաց, առ ահի որ Պ. Տիզմոնտ դինք չտեսնէ։ Ուստի երբ Ֆիլը դիտեց որ Մէյ իրլանտացի երիտասարդին միացաւ, իսկոյն գուշակեց որ իր վնտռած անձերն են որոց խօսակցութիւնը մոխկ պիտի ընէր և շուտ մը անոնց ետևէն գնաց։

Պ. Մայլս և օրիորդ Բէնֆօրտ քիչ մ'առեն պտոյտ մ'ըրին Բարքին մէջ և ապա նստան, իրրև երկու սովորական խօսակիցներ՝ որ անտես կ'մնան, վասն զի օդը ցուրտ լինելով՝ Պ. Մայլս լայն վերարկու մը հագեր էր և, ինչպէս արդէն ըսինք, օրիորդ Մէյի հագուստն աչքի չէր զարներ։

Ֆիլը անչուշտ գնաց նստաւ երկու սիրահարներուն ետին՝ խոտին վրայ։ Աղտոտ լրագրի մը կտորը հանեց և կարդալու սկսաւ, թէև կ'լափէր իրօք երկու խօսակիցներու բերնէն ելած մէն մի բառը։

Սիրող ու սիրուհի կ'չարունակէին խօսակցութիւն մը զոր սկսեր էին երբ իրարու հանդիպեցան։

— Միթէ այն մարդը կասկած ունի՞ վրադ — ըսաւ օրիորդ Մէյ՝ ակնարկելով անչուշտ Տովքրի։

— Կ'վախնամ որ ունի — պատասխանեց Պ. Մայլս տրտմադին. — և չեմ կարող բերանս բանալ ինքզինքս պաշտպանելու համար։

— Ինչո՞ւ։

— Վասն զի իմ պաշտպանութեամբս պիտի ստիպուիմ այն գիշերուան դէպքը բացատրել, և չեմ կարող բացատրել։

— Եւ ինչո՞ւ համար չես կարող։

Պ. Մայլս լուռ կեցաւ, այնպէս որ օրիորդին դ'այնը նետեց։

— Միթէ ունիս պատճառ մը — զօրաւոր պատճառ մը։

— Ա՛յո՛։

— Միթէ այդ պատճառը — կրնե՞ս ըսել։

Պ. Մայլս գլուխը ծռեց։

Օրիորդ Բէնֆօլտ աւելի ևս դեղնեցաւ և դառնապէս խնդաց։

— Իրաւի՝ շատ ախորժելի պատճառ մը մէջ կ'բերես — ըսաւ նէ հեգնօրէն։ Ես քու սիրոյդ համար աւելն առաջարկ մերժեցի,

վասն պի կարծեցի որ դու պիս կ'սիրես, և դու . . . դո՛ւ ինձ ուրիշ կնկան մը խօսքը կ'ըսես։

— Խմաստ չունի ըսածդ — պատասխանեց Մայլս անհամբեր։ — Խնդրոյն մէջ սէր չկայ բնաւ. միայն չեմ ուզեր կնկան մը տուած խոստումս դրժել, և դու առաջինը պիտի լինիս յորդորողն որ այդպիսի բան մը չընեմ։ Մինչ իմ պատուոյս չ'ես հաւատար։

Օրիորդ Մէյ սիրոյին երեսը նայեցաւ կասկածանօք։

— Մինչ կարծէդ եմ հաւատալ մարդու մը պատուոյն — պատասխանեց նէ որամտօրէն։

— Այդ կախումն ունի մարդուն տեսակէն — պատասխանեց Մայլս հանդարտութեամբ։ — Անշուշտ՝ անհերքելի, ծիծաղելի բան մ'է պատուոյ վրայ խօսիլ ներկայ ժամանակիս մէջ, կ'հաւանիմ, բայց դժբաղդաբար իմ երակներուս մէջ անկեղծ արիւն մը կ'հոսի և ես ահա վերսին կ'խնդրեմ որ վստահիս ինձ մինչև որ խօսելու ժամն հասնի։

— Եւ պիտի խօսի՞ս։

— Այո՛, պիտի խօսիմ երբ ուրիշ ելք չդտնեմ — պատասխանեց նա թեթև սարսուռ մ'դգալով։

Օրիորդը ձեռքը տուաւ անոր. Մայլս առաւ զայն ու թեթև մը սեղմեց։ Ահա այսպէս լռիկ մնջիկ վերջ տուին իրենց վէճին։

Բոլոր այս խօսակցութիւնը պատուոյ մասին անիմանալի էր Ֆլիբի համար, որ՝ քիչ մը մտածելէն ետև, այս եզրակացութիւնը հանեց թէ խաղէն դուրս տեսարան մ'էր։ Բայց վերջը սիրող ու սիրուհի սկսան այնպիսի նիւթի մը վրայ խօսիլ որ Ֆլիբի նպատակին յարմար էր։

— Օրիորդ Մէյ — ըսաւ Մայլս — կ'ուզեմ որ ինձ պատմես թէ տիկին Պալթմոյ ինչ ըրաւ . . . այն երեկոյ։

— Այն գիշերն որ խոյս տուաւ։

— Այո՛։

— Նայիմ — ըսաւ Մէյ իր աղուոր ճակատը պռստելով — պատահանդէս մը դացինք — տիկին Ֆէրստոքի պարահանդէսը։

— Ժամը քանիին։

— Ժամը իննին ու տասնին միջոցները։

Ե՞րբ ելաք պարահանդեսէն։

— Շատ կանուխ. դրեթէ ժամը տասն ու կէս անցած էր. իրաւի՝ չատ քիչ մնացինք անդ։ Տիկին Պալթմոյ ըսաւ թէ գըլուխը կ'ցաւի և տուն դնաց։ Գիտես արդէն որ մեր տունն մի

քանի տունով հետի է։ Կարծեմ նա անդ դիմեց իր վիճուստը ծածկելու համար։

— Ի՞նչ պատահեցաւ երբ նէ տուն գնաց։

— Կին մը կար որ կ'սպասէր որպէս զի իրեն հետ առանձին խօսի։

— Կին մը — կրկնեց Տիմճնա — և ո՞վ էր այդ կինը։

— Զգիտեմ. և ոչ իսկ զանի տեսայ։ Նէ տիկին Պաքօմպի հետ տեսակցեցաւ և ապա գնաց ժամը տասն ու մէկ և տասն երկուքի միջոցները։

— Ինչպէ՞ս իմացար այդ։

— Սպասուհիս ըսաւ ինձ։

— Իսկ տիկին Պաքօմպ ո՞ր ժամուն մեկնեցաւ։

— Զգիտեմ։ Նոյն գիշեր վերստին չտեսայ զինք։ Նէ հանգստանալու գնաց գլխի ցաւ ունենալով, և կարծեմ մէկ տասը կանուխ ճամբայ ելաւ որպէս զի Շօրհեմի չոգնկատքին հասնի։

— Հապա նոյն պահուն ո՞ւր էր լորտ Պաքօմպ։

— Նա Պէրքշիր գացած, բայց կէս գիշերէն առաջ դարձած էր։ Նա և տիկին Պաքօմպ վերջին օրերս իրարու հետ գժտեր էին և չէին տեսակցեր։ Իսկ լորտ Պաքօմպ ի դարմին քաղաքը իր ակուսքը գնաց, այնպէս որ առաւօտուն խմացած պիտի չինի իր կնկան վախուստը։

— Միթէ նամակ մը թողուց նէ։

— Կարծեմ որ գրեց Լորտին։ Բայց ինչո՞ւ համար բոլոր այս հարցումները կ'ուզես ինձմէ։

— Ինչո՞ւ չհարցնեմ։ — վասն զի կ'փափաքիմ, թէ հնար է, գլուխս ազատել։ Կ'ըսեն թէ սպաննուած կինը Լէնա Սարչյանն է, զոր ցորեկը տեսայ։ Նոյն գիշերը տեսայ նաև կին մը Գալիտզինի քնակարանը, և այդ կինն, ոտիկանին խօսքին նայելով, ին և նոյն անձն է։ Արդ՝ քանի որ բնակարանէս ելնելէն ետև Սբենսէր Էրըզպիի հանդիպեցայ և փոշոցներն ալապ չրջել, չեմ կարող պլաթֆորմեան փաստը մէջ բերել։ Էրզպի տեսաւ պիս երբ ձէրմին փողոցէն վեր կ'ելնէի, և սպանութեան վայրը հեռու չէր, այնպէս որ եթէ ձեռնակալուիմ պարապանները ինձ դէմ պիտի խօսին։ Ոչ ոք պիտի հաւատայ թէ սպաննուած կինը տեսած չեմ նոյն գիշեր, և այդ ալ չեմ կարող ապացուցանել առանց խոստումս դրժելու։

— Կ'իմանամ ինչ ըսել կուզես, բայց ինչ յարաբերութիւն ունի տիկին Պաքօմպ այս գործին հետ։

— Ահա խնդիրը։ Հետաքրքիր եմ իմանալ թէ երօք լորտ Գալիսդըն նոյն գիշեր մեկնեցաւ քաղքէն, ման դի վախաքս է գիտնալ թէ իր սիրուհւոյն մահուան մէջ մատ ունի՞։ Նա բնակարանէն ելաւ որպէս դի ժամն լինի տաս վայրկեան անցնելով Լոնտօն Պրիտճէն մեկնող չոգեկառքին հասնի. բայց միթէ հասա՞։ Ես չեմ կարծեր, ման դի քաղքէն չկրնի հեռանար առանց տիկին Պալքօմպն իր հետ առնելու, և՝ քու խօսքիդ նայելով, այդ տիկինը միայն երեքշաբթի առաւօ կանուխ իր տունէն դուրս ելեր է։ Այսպէս կարծեմ թէ լորտ Գալիսդըն քաղաք մնալով գիշերը պանդոկ մ'օթևանած է, ուր տիկինն դինք գտած գտած է և առաւօտեան չոգեկառքով Շօրհէմ հասած են։

— Բայց միթէ կարծես թէ լորտ Գալիսդըն սպաննած լինի այս կինը։

— Ոչ, չեմ կարծեր — պատասխանեց Նա մտախոհ։ — Իրօք, չեմ կարծեր բնաւ, բայց կ'փափաքէի գիտնալ թէ այն գիշերն ինչպէս անցուց։ Իսկ ես շատ ձախող կացութեան մէջ կ'գըտնուիմ, ման դի՝ եթէ դիս ձերբակալեն, չկրնամ օձիքըս ազատել մինչև լորտ Գալիսդընի վերադարձը։

— Ինչո՞ւ համար։

— Ման դի չկրնի կարող լինիմ իմ անմեղութիւնս հաստատել մինչև որ իր պրօսանաւը չդառնայ։

— Բայց անմեղ ես։

— Ա՛յո՛, կարո՞ղ ես տարակուսիլ։

— Ես ստոյգ էի արդէն։

— Ճուստամ որ երդուեալ դատաւորներն, տասներկու լաւ և ծրինասէր մարդիկ, նոյնպէս պիտի համոզուին իմ անմեղութեանս — պատասխանեց Պ. Մայլս խոժոռ դիմօք՝ երբ միասին սկսան հեռանալ։

Ցիթբ պահ մը անոնց ետևէն դնաց, բայց միայն մի քանի ծանուցիկ խօսքեր լսեց որ իրեն համար անոտի երևցան։ Ուստի բարքին մէջ լսած խօսակցութիւնը, որ անեղծ տպաւորութեամբ ուղեղին մէջ, վազեց գնաց իր տիրոջ հաղորդելու և այսպէս ուրիշ օգակ մը յաւելու այն չղթային որ հետզհետէ կ'կաշկանդէր Լէնա Սարչայնի սպաննիչը։

(Շարունակելի)

ՎԵՆԵՏԵԱՆ ՎՐԺԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ

Արեւը մարը կ'մտնէր չքեղաշուք և պաշտելի Վենետկի վը-
րայ իր ծիրանի նշոյլները կ'սփռէր, երբ օրիորդ Սբերանցա Լի-
ոծի ծովու բաղնիքէն նոր ելեր էր, բաղնիք՝ որ իր սիրական զբօ-
սանքն էր, և որ իր ցանկալի առողջութեան ու գեղանի մարմ-
նոյն չատ օգուտ բերած էր։ Սբերանցա իր հրապուրելի գեղոյն
համար Վենետկի նկարիչներուս պատկերցուս տիպարներուն ար-
ժանի թագուհին էր։ Երբոր Գանովայի առջև իբրև պատկեր-
ցուս նստող իտալացի կոմսուհւոյ մը հարցուցին մի անգամ թէ
ինչպէ՞ս կրնար այդպիսի բան մ'ընել — նէ պատասխանեց ըզ-
մայլելի պարզութեամբ մը — Աչխատանոցը բաւական տաք է։
Նոյն դէպս Սբերանցա իր կոչման նկատմամբ խղճահարութիւն մը
չունէր։ Եւ ինչո՞ւ ունենար, քանի որ սերունդէ սերունդ իր ըն-
տանիքն արհեստագէտներուս առջև՝ իբրև բնատիպ տիպարներ
նստած էին։

Ռօնալտ Ռօս՝ որ ջրուղեայ քաղքին մէջ երեք տարիէ ի վեր
կ'բնակէր, չատ բաղդաւոր էր, վասն զի Սբերանցան ունէր իբրև
տիպար և իր պաշտօնակից պատկերահաններուս նախանձը կը
չարժէր։ Սբերանցայի հնչմարիկ ձևն, հնորհալի չարժուձևերն և
դէմքին գեղեցկութիւնն այնքան հռչակ ունէին որ Ռօս խնդու-
թենէ կ'երգէր։ Նշանաւոր անձեր ըսած են որ արուեստագէտ-
ներն երբէք չեն սիրահարիր իրենց տիպարներուն հետ։ Լաւ,
բայց ոչ ոք անվրիպելի է, և Ռօս չատ չանցաւ զգաց որ Սբերան-
ցայի հնորհաց զոհ մ'է, թէև, արդ իտալական սովորութեան
համաձայն, աւելի ժամանակ անցնելու քան ուրիշ նպատակի մը
համար։ Վասն զի իր բնիկ երկրին մէջ՝ Սկովտիա՝ սիրուն և գե-
ղահեր օրիորդ մ'արդէն դրաւած էր Ռօնալտի սիրտը։

Շատ տխուր էին՝ վերջալուսին՝ Սբերանցայի մտածմունքը։ Նէ
տեսեր էր նոյն առտու իր տէրն այդ օրիորդին հետ — այն նա-
նա Ֆէյդն— որու առաջին անգամ ցոյց կ'տար Ս. Մարկոսի պա-
լատին հրաչալիքը։ Գանի սիրուն և յարմար կ'երևէին այս ա-
մէնք։ Սբերանցա զգջ գիտէր իր յատուկ արժանիքն, և այն ե-
րեկոյ նէ զգաց որ անկարող էր մրցիլ հնորհագեղ, նրբակազմ
հիւսնածին դեղանւոյն հետ, որ, ինչպէս Ռօս անխոհեմաբար

յայտնած էր, իր հին սիրուհին էր։ Աբերանցա արհամարհելի աչք նայեցաւ իր խառն դիտակին, իր նկարագեղ հագուստին և անուշ դէմքին։ Երբ օրիորդը կ'երթար և դէպ ի Դօրրէ տէլ Օրլօճիօ կ'դիմէր, որմէ անդին ան հեռի Ռիալդօէն, իր տունը կ'գըտնուէր, նաւավար մ'որ իր թևն ուսին վրայ վեր ի վերոյ ձգած վերարկուին մէջ ունէր, բարև առաւ օրիորդին և ըսաւ անոր որ Ռօնալա վարձած էր իր նաւակն նոյն երեկոյին Մեծ–Կանալին վրայ տեղի ունենալիք նաւագահանդիսին համար։ Աբերանցա ոչ միայն կ'չահէր իբրև տիպար, այլ իբրև գուսան։ Նէ ևրաժշտական խմբի մը կ'պատկանէր, որ՝ չարաթը մի անգամ, չինական լապտերներով լուսաւոր մեծ Կոնդօլաի մէջ՝ կ'նաւագլին ու կ'երգէին Ռօնալացոյի պանդոկներու բնակիչներու համար։ Աբերանցա միտքը դրաւ նոյն երեկոյ Ռօնալաի չարչարուածները դիտել և քաջակազմ նաւավարը վարձատրեց սիլայիր ժպիտով մը։

— Խնդմ Անդռնիօ — մրմնաց նէ, երբ նաւավարն հեռացաւ — իրօք նա կ'սիրէ դիս և անկեղծ է։

Լուսինը լի ու լի կ'փայլէր Ադրիական ծովուն թագուհւոյն վրայ երբ երեկոյեան ճաշի ժամն անցաւ։ Վենետկի այցելուները զմայլած էին թէ տեսարանին գեղեցկութեան և թէ ձայներու գեղեցկութեան վրայ, վասն զի երաժիշտներն սիաեր էին իրենց գործն, մէն մին պարծենալով որ աննման քաղքի մը քաղաքացին կամ քաղաքացուհին չէր։ Նանա Ռէյդ եօթերորդ երկինքն էր, յատկապէս այս պատճառաւ որ գեղեցիկ Ռօնալա Ռօա իր մօտ կոնտօլային մէջ առած էր։ Անդռնիօ իր նաւակը մօտեցուց երաժիշտներուն, որպէս զի ոչ միայն իր աչքն ու ականջն լի ու լի վայելեն ներդաշնակութիւնն այլև ինքն ալ իր սիրական Աբերանցայի վրայ ակնարկ մը նետէ։ Ջութիկներն, կիթառն ու վիոլն կ'ճայնակցէին սիրահարի մը ցայգանուագին։ Երբ Աբերանցա ոտք եղաւ որպէս զի նաւակին խնայց վրայ նուագը երգէ՝ աղօտագին լուսնկային տեսաւ, Ռօնալաի թևն ակամայ գեղանոյշ օրիորդին մէջքը բոլորած, և պահ մը յուզմամբ ճայնը դողդողաց։ Արուեստագէտն, իր բնոյթ ուշադրութիւնն բնկերու հետն նուիրած՝ չդիտեց Աբերանցան մինչև որ նէրա պերճ շէտերը սահեցին գինք վեր նայիլ, վասն զի նէ տակ երած էր մի և նոյն երգն իրեն գործատան մէջ՝ երբ ինքն ալ վինի թելերը կ'չարժէր։ Ռօնալա իսկոյն հրամայեց զարմանահար Անդռնիօի նա դառնալ գէպ ի Բի–պըցէդան։ Նանա դժգա-

մակութիւն ցոյց, բայց Ռօնալտ պնդեց իր հրամանին վրայ ըսելով թէ օդը խոնաւ է և թէ բաւական պահպանուած չեն դիշերային հովին դէմ։ Օրիորդն որ հիւսիսային հովերու և սիսկական մշուշներու վարժ էր, սրտովին բողոքեց այդ անպատեհ հոգատարութեան դէմ, խորհելով որ թոյլ կիներ մը մարդս կ'դրկէ քաջութենէ։

Մինչդեռ Բէյդի ընտանիքը վենետիկ մնացին — ամբողջ ամիս մը — Ռօնալտ ժամանակ չէր գտներ նկարչութեամբն պարապելու։ Լուսինը նսեմանալէն առաջ իր ամուսնութիւնն օրիորդ Բէյդի հետ որոշուած էր։ Սովորաբար կէս օրէն ետք այս խումբը փոքրիկ չոգենաւով Լիտօ կ'երթար. ընտանեաց նորահարսն անդամներն ալ ջրի մէջ կ'զբօսնուին, մինչդեռ մեծերն ալ քամին կ'ընչէին։ Նաև և Ռօնալտ վարժ լուղորդներ էին և ստէպ պարանէ պատնէշներէն անդին՝ որ դրուած էին իրենց ապահովութեան նշան անփորձ լուղորդներուն համար, իրարու կ'հանդիպէին խոր ծովուն մէջ։

Սթերանցա բնաւ գործատուները չեկաւ նոյն պահուն, և ոչ Ռօմ տեսաւ դինք երաժշտական խմբին մէջ։ Նկարիչը գոհ էր, և և չէր խորհեր իսկ թէ արդեօք ինչ եղաւ նէ։ Խիղճն մեզ ամենքս վատ կ'ընէ։ Անդրնիս ալուհատագիտին և իր նշանածին նաւակավարներու պետն էր։ Նա քիչ մ'անգլիարէն կ'իմանար, վասն զի մէկ երկու անդամ ուղևորեր էր Անգլիա։ Նաւավարն իր ցանկալի Սթերանցային կ'յատներ Ռօնալտի և իր նշանածին բոլոր չարժումներն՝ և նախանձու նեղութեամբ կ'խօսէր անոր թէ ինչպէս Ռօմ կաթոդին կ'սիրէր օրիորդ Բէյդը։ Օր մ'իմացուց Սթերանցաի թէ Բէյդի ընտանիքը մտադիր է հեռանալ վենետիկէն յաջորդ շաբթուն վերջը։ Մի քանի օրէն ետք՝ Լիտոյի վերակացուները լուր առին իրենց բալնեպան կնոջ կոզմէ թէ հիւանդ էր, բայց իր պաշտօնը կատարելու համար ժամանակաւոր փոխանորդուհի մը կ'ուղարկէր։ Այս փոխանորդուհին էր Սթերանցա, որ չուտով հմտացաւ դրագրին թէ այս պաշտօնին կրնայ շատ յաջողութեամբ կատարել։

Շաբաթն երթալէն օր մ'առաջ էր որ Նանա և Ռօլանտ Լիտո գացին որպէս զի վերջին անդամ մ'ևս միասին լողան։ Առաւօտ շատ ամպոտ էր և անձրև կ'սպառնար, բայց երբ կղզին հասան արևն իր ղէմքը ցոյց և սկսաւ փայլիլ։ Ադրիական ծովը սովորականէն աւելի ալեծուփ կ'չարժէր։ Սկսնացի օրիորդն կ'զմայլէր դիտելով այն հաճոյատեսիլն որ կ'ներկայէր

վրվրադէզ զմրուխտի կոհակներն և թլփայորդ ծիրանածիր հորիզոնը։ Ոչ ոք կ'լողար իրենցմէ դատ։ Պահ մ'նետք ետև սկսաւ մխիլ և չիտակ գնաց իր սեռնակին ի լուր։ իսկ Նանա դարձաւ կանանց յատկացած կողմն որպէս զի հագուի։

— Փափաք ունիմ անգամ մ'ևս լողալ ներս գալէն առաջ — բացագանչեց Նանա։

— Կ'փափաքիս որ հետդ գամ, տիրուհիս — հարցուց բաղնեպահ կինն՝ իր անգլիարէն խեցգետկ լեզուաւ։

Նանա սիրեց այդ կնկան նայուածքը, այդ կինն որ ունէր սև մաղեր, գեղանի դէմք, կարմիր ղդեստներ հագած սիրունապէս, և չուտով հաւանութիւն տուաւ անոր առաջարկին։ Ուսի՝ միասին ձեռք ձեռքի տուած նետուեցան ծովն։ Մարդ մը չկար բաղնետան պատշգամին վրայ։ Նաւակի մը մէջ երկու մարդիկ որ միշտ կ'հակէին պատնէշին մօտ, որպէս զի եթէ վըտանգ մը պատահի խոցոյն օգնութեան հասնին, տեսնելով որ բաղնեպահ կինն այցելու օրիորդին հետ կ'գտնուի, հոգ չըրին և ծովն ընկած վեցդյր մը բռնելու համար սկսան աշխատիլ։ Սակայն պատնէշէն դուրս կոհակներն սկսած էին ստուարանալ և ուժգին շարժիլ։ Նանա մի քանի անգամ կլլեց յետին ծայր աղի ջրէն և խնդրեց բաղնեպահ կնոջմէ որ իր ձախ ձեռքը բռնէ որպէս զի կարող լինի աւելի լաւ մաքառիլ ալեաց դէմ։ Յանկարծ՝ երբ արեւուն գունաթը մարը մտաւ բաղնեպահ կնկան բուռնն աւելի ևս ծանրացաւ։ Նանա սոսկաց, չկրցաւ իմանալ թէ ինչու համար իր խնդրէն անլսելի կ'մնայ, և գոչեց բարձրաձայն, ձայնն հովին մէջ կորսուելով.

— Իմ Ռօնալտս, օգնութիւն հասիր։

— Նա էմ Ռօնալտս է — սուլեց Սբերանցաւ— Դու պինք կորզեցիր իմ ձեռքէս։

Նանա ուրիշ խօսք արտասանելէն առաջ՝ մղուեցաւ ծովուն խորը։ Նէ իր բոլոր զօրութեամբը կռուեցաւ, բայց իրը մանկիկ մ'էր խաղալի օրիորդ ին ձեռաց մէջ։ Անգամ մ'ևս ծովուն երեսը հասաւ և բոլոր ուժովն աղաղակ մ'արձակեց։ Նաւավարներուն ուշադրութիւնն այդ ծովային պայքարին կողմը դարձաւ, բայց ոչեան միայն բաղնեպահ կնկան կարմրագոյն թևն օրիորդին գլխուն վրայ ընկած։ Եւ Աղրիական ծովն ուրիշ երկու հարս ևս ունեցաւ։

ՊԱՐԾԵՆԿՈՏՈՒԹԻՒՆ

Կան ժողովուրդներ որոց համար կարծես բնածին է պարծենկոտութիւնը։ Կ'պարծին չէ թէ իրական արժանեայց վրայ, այլ այնպիսի հանգամանաց վրայ որ հասարակ են և այլոց և որ իրրև բնական բաներ կ'ընդունուին։ իսկ երթէ երբեք՝ պարագայից բերմամբ, սովորականէն դուրս մտային կամ նիւթական ճարտարութեան մը հեղինակները հանդիսանան, երթէ պատահմամբ գրական, դիտական ու արուեստական նոր գործ մը յառաջ բերին, իրենց պարծենկոտութիւնն չափ չունենար և փողերով ու թմբուկներով կ'հռչակեն չհատակութիւն մ'որ թերևս վաղուց ուրիշ աւելի գործունի այլ համեստ ազգերու բաժինն եղած է։ Ի բնէ պարծուկ ժողովուրդ մը կ'նմանի այն հօր որ, տարիներ զաւակի մը ծննդեան անհամբեր սպասելէն ետև՝ երբ յանկարծ լոյս կ'տեսանէ այդ ցանկալի չառաւիղը՝ իրրև չնաչխարհիկ և անդիւտ էակ իր առջև կ'ձգէ, չքեղօրէն պճունած, և դռնէ դուռ, փողոցէ փողոց ի պատյտ կ'հանէ՝ պարծենալով թէ կարող է այդպիսի պատուղ մ'արտադրել, պատուղ՝ որոց նմանները, սակայն, անաչխատ և բնական ցանկութեանց չնորհիւ, անդադար կ'արտադրին, անոնց մէջ դերադոյն պարծենկոտութեան առիթ մը չնշմարուելով։ Այսպիսի հայր մ'որքան ծիծաղելի, նոյնքան հեգնալի պատկեր մը կ'ընծայէ ժողովուրդ մ'երբ կ'պանծայ այնպիսի բաներու վրայ որ կամ փոխառուած են և կամ բնաւորութեան մ'արդիւնքը։

Հայ ժողովուրդը թէև ի բնէ ծանրաբարոյ և պարկեշտ, կարծես փոխած է իր այդ դովելի բնաւորութիւնը դարերու աննպաստ և ձախող պարագայից բերմամբ, և իրրև չտես կամ աչքածակ, ոչ միայն արտաքին անոտի ցոյցերու մէջ վաճառք և ստէպ մոռածին իրողութեանց մէջ սիփոփում և ինքնագոհ գոհունակութիւն կ'վնտռէ, այլ

և կ՚սիրէ ինքզինք խաբել և արդարութեան արտայայտութիւններ նշմարել ուր միայն անիրաւութեան հարուածներն ակնհայտ են, և պանծալի յաղթութեան նշաններ տեսնել ուր ինքնաբեր թշուառութեան դուշակները կ՚երևին։

Այս ինքնահաւանութեան և անապարծութեան խառնուածքի նշոյլները չէն երևիր արդեօք իր կենաց այլ և այլ գործողութեանց մէջ։ Մինչէ ցուցամոլութեան, սուտ համբաւոյ, նսեմութեան և դովասիրութեան չարհերը սատկիլ իր ամենէ նուիրական սկզբունքն ու չահերը, իր ընտանեկան անդորրութիւնն, իր եկեղեցական իրաւունքն, իր ազգային լաւ յատկութիւնները, տարեւոր աշխատութեամբ դիզած հարստութիւնն, և մինչև իսկ իր իմացական և բարոյական ընտիր ձիրքը։ Հայ ընկերութեան յաւին անհատէն մինչև բարձրագոյն անձնաւորութիւնն կ՚ջանայ ընդհանրապէս երևիլ ինչ որ չէ քան լինիլ ինչ որ պէտք է։ ցուցամոլութեան ախտն աւելի քան երբէք կ՚վարակի շատ տեղ և կ՚արշաւէ թէ ընտանեկան, թէ եկեղեցական, թէ անհատական, թէ դրական և թէ առևտրական շրջաններու մէջ։ Բանաւորն իր գուռը մեծ կ՚բանայ, իր գլխէն վեր ծախսուց մէջ կ՚գլորի, որպէս զի խօսուի և ուշ դրաւէ։ եկեղեցականն իր վեղարին ձեւին ու գոյնին վրայ աւելի կ՚խորհի քան թէ կրօնական կարգաց և սահմանաց վրայ, հարուստը պալատներ կ՚շինէ վոխանակ առևտրական տուներ կանդնելու, դրագէտը գովեստներ չահելու ըղձով կ՚ծեփծեփի հրապարակի վրայ և իր մտայ բարձրութեան վրայ ղմայլողներ կը վինտռէ, գիտունն իր չհնարած գիւտերուն իրրև հեղինակը կ՚հռչակուի, մինչդեռ Աղքին մի քանի ոսկի շնորհողն քաղերարներու կարդն անցնելու փառամոլութիւնն ունի։ Բայց ո՛ր մէկն ըսենք։ Ընդհանուր կան և մեր մէջ օրինաւոր անուն և հռչակ հանելու առակ ոյժեր, որ պիտի կրնային իրական օգուտներ արտադրել, եթէ միայն համեստ ու բանաւոր սահմանի մէջ մշակուէին և Աղքին քան անձնական պատիւը բարձրացնելու հետամուտ լինէին։

Մեծ և հզօր ազգերու մէջ ինչ նշանակութիւն կրնայ ունենալ հայացի պարծենկոտութիւնն, ինչ օգուտ կը-նայ յառաջ բերել վատամոլական ձկտումներ եթէ ոչ ի կորուստ ժամանել այն յարգն ու անունն զոր իրրև հին, չարքաշ, տոկուն, յառաջդիմասէր ժողովուրդ մ'իրա-ւամբ կ'վայելէին հայք։ Եթէ հայն ունենար և վայելէր այն նիւթական և մտաւորական ճախութեանց արդիւնքն որով կ'պարծին այսօր Ամերիկա, Անգլիա, Ֆրանսա եւ, թերևս տնգ մը չպիտի կարենար ազգիլ, ինչպէս կ'ըսեն ռամկօրէն, և բոլոր աչխարհ պիտի դղրդէր դիւաերու, մերձնաներու, դրախտանութեան և գեղարուեստից մէջ ըրած յառաջդիմութեանց դովեստներով, և պիտի պա-հանջէր անշուշտ որ աչխարհիս ամեն կոզմն արձաններ կանգնեն ի յիշատակ իր անմահ վիպասոյ։

Եւ սակայն եթէ կայ բան մ'որ հնարագիտութիւնը, տաղանդն ու հանճարը կ'սպաննէ անդադար, եթէ կայ բան մ'որ ժողովրդեան յաջողական գործադրման դէմ թումբ մը կ'կանգնէ, այս է բռնաբարութիւնն ու ինքնա-դովութիւնն, այս է անհիմն գրուատիքն, չոգմնորոշու-թիւնը։ Միւս կողմէ եթէ կայ բան մ'որ մարդկային այդ ամբարտաւանութեան պարտի սանձ մը դնել և ա'և է հեղինակութեան չափ մը, այս է մարդկային գործադրման օրինայ գիտակցութիւնն, այս է կատարած յառաջդի-մութեան գաղանիքն, յառաջդիմութիւն որ ոչ մի մար-դու և ոչ մի գարու գործ է այլ անհամար մարդերու և գարերու արդիւնք։

Արդարև՝ եթէ կան երկրին վրայ ի բնէ օժտեալ և գիտութեամբ զարգացած ժողովուրդներ որ ու րիշներէ աւելի մարդկային այլազան ճարտարութեանց մէջ կա-րևոր և բարձր դիրք մը չահած են, այդ ժողովուրդներն պարտին քիչ շատ պարծենալու իրաւունք ունենալ։ Արդ՝ կան իմաստասէրներ որ այդ իրաւունքն իրրև անտեղի և անհամեստ կ'զանան անոնց առարկելով որ չկայ նոր հնար, մը գիւտ մը որ միակ ժողովրդեան մը յա-տուկ սեպհականութիւնը կամ մտաց ծնունդը լինի։

Ահա այսպիսի օրինակելի չափասիրութեան առջև, որ միանգամայն բանաւոր է, պարծենկոտ հայը պարտի կանգ առնուլ և խորհիլ թէ ինչ յետամնաց ուղղութիւն մը, ինչ դատապարտելի ընթացք մը բռնած կ'լինի եթէ փոխանակ իր բոլոր մտաւոր և բարոյական յատկութիւնները լուսեղեայն և համեստօրէն մշակելու յօդուտ Աղգին ու երկրին ուր կ'ապրի, ելնէ պարծի, չփանայ միայն, ցուցասիրութեան մէջ գոհացում վնտռէ և անընդունական խորհուրդներու կամ առաւելութեանց մէջ փառք։

Եւ ի հաստատութիւն մեր այս խորհրդածութեանց, անպատեհ չենք համարիր մեր ընթերցողներու հաղորդել Ամերիկեան թերթէ մը քաղուած հետևեալ ուշադրութեան արժանի և հմտալից յօդուածն, գործ Բրօֆէսսօր Ճոհն Սուխիի և մակագրեալ Ամերիկեան պարտենկոտութիւն։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՐԾԵՆԿՈՏՈՒԹԻՒՆ

Մեր մէջ ոչ ոք այնքան լաւ կ'խորհի իր ճշմարիտ արժանիքին չափէն աւելի գիտակ անձին վրայ, որքան կ'խորհի այն մարդուն որ իր արժանիքին վրայ այնքան չծանրանար։ Միթէ նոյն գիտողութիւնը հաւասարապէս ճշմարիտ չէ՞ մեր երկրի ժողովրդոց և հասարակութեանց նկատմամբ։ Միթէ խոհեմութիւն չէ՞ վերջ տալ մեր ինքնագովութեան որու հակամէտ ըրած է մեզ յաջողութիւնը, և քիչ մը խոնարհաբար խորհիլ թէ ուր կ'գտնուինք։ Մինչդեռ այս դարս մեծագոյնն է ամեն դարուց մէջ այն յառաջդիմութեան մասին զոր ընդհանուր քաղաքակրթութեան անուամբ կ'յորջորջենք, և որ անշուշտ ճարտարագիտական յառաջադէմ քաղաքակրթութիւն է, և մինչդեռ մեր ազգն ուրիշ ազգաց հետ համահետ կ'շարժի, միթէ կայ ժողովուրդ մ'որ քան զմեզ նուազ աեղեակ լինի թէ ինչ կ'ընեն ուրիշ ժողովուրդներ, և միթէ այնքան ապուշ ենք որ ուրիշներուն ըրածէն օգուտ քաղենք։ Իսկ եթէ ուրիշ ազգեր այն-

քան համոզուած են իրենց արժանեաց վրայ, միթէ իրենց չեն վերապահեր միայն այդ համոզումը։ Անուրանալի իրողութիւն է որ ճարտարգիտական մի քանի ճիւղերու մէջ գեր ի վեր ենք քան ուրիշ ժողովուրդներ, բայց պարծենալու պատճառ մը չենք կարող դանել երբ կ'տեսնենք որ անոնք ուրիշ բաներու մէջ մեզմէ գերազանց դիրք մ'ունին։ Որքան որ մեծ են մեր գործերն ի շնորհս այլազան դիւրութեանց և դարերու մեզի տուած դիտութեան, դարձեալ ինչ ունինք բաղդատելու բարթամութեան կողմէ հին Եգիպտոսի մեծ գործերուն հետ, ցուցնաստանի արուեստից և ճարտարապետութեան հետ, հին Հռոմի նկարչութեանց, քանդակագործութեան, չինութեանց, արահետներու, ջրմուղներու և բազանեաց հետ։ Միթէ կարող ենք մրցիլ Հնդկաստանի դամբաններու և մետաքսեղենի հետ, վենետկի պալատներու հետ, Գերմանիոյ դաստիարակութեան հետ, Ֆրանսայի յախճապակիներու, օթոցներու, արուեստի, ճարտարութեան, գիտութեան, մեքենագործութեան, ճաշակի և գեղեցկութեան հետ։ Միթէ իրօք մրցման մէջ ենք Հելվետիոյ և Նորվեկիոյ վորագրութեանց հետ։ Իտալիոյ անդրիագործութեան և երաժշտութեան հետ, Ճաբոնի ապիկար և jades ներու հետ, Զինաստանի մետաքսեղէնի և բրուտութեան հետ, և այն անհամար հրաշալեաց հետ որ կ'երևին հնարագիտութեան, մեքենագիտութեան, բժշկականութեան, գիտութեան, մետաղագործութեան, նաւարկութեան, տարազագործութեան գործիներու և պատերազմական անօթներու, թղթատարական և քաղաքային վարչութեանց, ներքին ղարգացման և տեղական կառավարութեան մէջ՝ Անգլիա։

Ուրիշ ազգեր կ'գնհատեն և կ'գովաբանեն այն ամեն բաները որոց մէջ գիրենք կ'գերազանցենք, ինչու համար այնքան կ'դժկամակինք, այնքան անաղնիւ ենք, եթէ ոչ անիրաւ, վատասրէն գովեստը տալ անոնց։ Պատճառն այս է որ շատ ու շատ անազարծ ենք, և կամ թերևս պատճառն այս է որ տգէտ ենք։ Բայց եթէ այս է պատճառն, պատուարեր չէ բնաւ մեզ։ Արդեօք այս է պատճառն որ մենք մեծ մեծ կ'ջարդենք և կ'սպասենք որ ուրիշներն ալ նոյնն ընեն։ Եթէ այս ճշմարիտ է, դոնէ մեր բնաւորութեան դատապարտելի մէկ կողմն է։ Կամ թէ արդեօք այս կարծիքը կայ որ եթէ այդպէս վարուինք ամերիկեան վարմունք մը չպիտի լինէր։ Կ'պարծինք մեր մեծ մարդերու, մեր գտուչներու, մեր վաճառականներու, մեր ձեռակերտանե-

րու, մեր ամեն գործողութեանց վրայ, բայց բնաւ չենք խորհիր թէ մեզմէ առաջ ինչեր ըրած են ուրիշ մարդիկ, ուրիշ ազգեր, գործեր՝ զոր մեզմէ առաջ սկսած են ընել։ Անշուշտ իրաւունք ունինք մեր Ֆրանքլինի վրայ պարծենալ, բայց անոր մէ առաջ քանի՛ քանի մեծ մարդիկ եկած են։ Նա հաստատեց որ փայլակն ու ելեկտրականութիւնն մի և նոյն բաներն են, բայց իրմէ առաջ ելեկտրականութեան վրայ որքա՜ն հմտութիւն կար։ Պարծանք կ՚համարինք մեզ Մօրսը, բայց իր մեծ գործն ելեկտրական հեռագրին մէջ չէր, վասն զի ուրիշներ նոյն պահուն կամ կանխաւ ըրած էին այդ բանն, այլ լաւագոյն գործին հնարեց հեռագրական և Լղրա Գորնէլի ալէս մարդոց գործակցութեամբ հեռագրական թել մը կանգնեց և ի գործ դրաւ։ Ելեկտրական մասն արդէն կար ի Հնդիա Ֆէրատէյի և ուրիշ եւրոպացի ելեկտրադէտներու։ Մեքենական մասն անտաշ էր արդի կատարեալ գործիներու բազդատմամբ։ Մեր արդի ելեկտրադէտներու մէջ կայ վոքրիկ բանակ մը որոց իւրաքանչիւրն ակիւ մը կամ անիւ մ՚է մեծ մեքենային։ Մի մարդու հանճարը այսօր մեծ կ՚երևի մեզ, բայց այդ ուրիշ քայլ մ՚է որ կ՚գայ կ՚վիճանայ ուրիշ մարդու մը հանճարին, որ օգնած է իր նախորդներուն հանճարին։ Գօրլիս մեծ մարդ մ՚էր, բայց Ուաթէն վերջն եկաւ, որ մեծագոյն մարդ մ՚էր։ Մեծ մարդիկ են մեր մեքենական գործիները չինողները, բայց ասոնք կ՚հետևին Ուիլ վօրթի, Մըզօ, լէյի, Ռոլէրդսի և Նասմիթի։ Նշանաւոր ենք փայտաչէն մեքենայից մէջ — թէև ոչ ամեն մասամբ — և սակայն ամեն փայտակերտ մեքենայից լինն ատոներորդն դար մ՚առաջ Պէնթէմի յԱնգլիա արտօնագրած մեքենային հետևողութիւնն է։

Մեր օրագիրներուն նայելով Թէրսէյ Սիդիի մէջ Բենսիլվանեան մեքենան աշխարհիս ամենէ մեծն է։ Այս ճշմարիտ պիտի լինէր եթէ Բարիզի մեքենայից Պալատը չդանուէր, որ առաջնոյն կրկնապատիկ մեծութիւնն ունի։ Աշխարհիս մեծագոյն կամուրջն ունինք կամ պիտի ունենայինք եթէ Սկոտիոյ Ֆօրթի կամուրջը դոյութիւն չունենար։ Մեր Ուօշինկդընի Ցիստեռնը բարձրագոյն է քան Բուրգերն, բարձրագոյն է քան Ս. Պետրոսի տաճարը, բայց էյֆէլի աշտարակն ամենը գերազանցէ։ Արդարև աշխարհիս ամենէ խոշոր արձանն ունինք, բայց այդ արձանն Ֆրանսա չինուեցաւ։ Հրաչքներ կ՚գործենք թէ մեծ և թէ փոքր բաներու մէջ, բայց քիչ բաներ կան, արդարև, թէ մեծ և թէ փոքր, որոց մէջ ուրիշ երկիրներ գերազանց չէ-

նին, այնքան քիչ որոց վրայ չարժէր պարծենալ, եթէ պարծենկոտութիւնը մեզի ընտասարեր չինէր ուրիշ ժողովրդոց առջև — ընտասարեր մեզի համար, վասն զի այդ պիսի բան մը յառաջդիմութեան ընտասակար է, և բան մ'որ անտարակոյս վատ ճաշակի արդիւնք է։

Վերջապէս՝ իրաւամբ պարծենկոտ ենք թէ ոչ։ Օտար պարբերականներ սովոր են հրատարակել այն ամեն բաներն որ իրենց դերապանց կ'թուի, և այս կ'ընեն որպէս զի սոյն տեղեկութիւնէ իրենց ժողովուրդն օգուտ քաղէ և միանդամայն մղում մը տան իրենց ճարտարագիտութեան։ Մեր արհեստագէտ լրագրներն ալ կ'օրինակեն այդ տեղեկութիւններ, բայց ինչ նպատակաւ, դժուարին է իմանալ։ Այդպիսի հրատարակութիւններ միայն մեր անապարծութիւնը կ'դգուեն և մեր ամբարտաւանութիւնը կ'զրգռեն, որոց և ոչ մին պիտանի կ'երևի։ Անտարակոյս ընթերցողներուս մէջ պիտի գտնուին այնպիսիներ որ իբրև պարտաւոր պիտի նկատեն զրածս, կամ հայրենասիրութենէ զուրկ անձի մը չաղակրատութիւնն, սակայն կան նաև անթիւ մարդիկ որ իրաւունք պիտի տան ինձ և պիտի հաւանին, թէ արդարև մեր պահանջոտութիւնն անհիմն է, և պիտի պատասխանեն ինձի հետ պարծենկոտներուն այսպէս. — ինչ-որ գրելով իսկ որ մեծ են մեր գործերն, միթէ պարծենալով չենք պաշտպաներ այս գաղափարն թէ ուրիշ ազգերէ բան մը սորվելիք չունինք. և միթէ ինքնագովութիւնն ո և է ձևով յառիթ ճաշակի հետեւանք չէ՞։

ՀՈՎՆ Ե. ՍՈՒԻՒ

ԴՈՂԴՈՐԹԱՒ ՍՏՈՐՈՏԸՆ*

ՍԱՂԻՄԵԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.ետեաց երկրի պատմական Մայր–Քաղաքին մէջ՝ յերուսաղէմ ենք։ Կ'քալենք Սրբազան յայտնութեանց, Խորհրդոց,

* Ընտասեր մը յղած է մեզ սոյն յօդուածն, որ ուշադրութեան արժանի է թէ ոճի, թէ իմաստից և թէ երևակայական վաւերական ներշնչութեան կողմէն և որով երուսաղէմի միաբան Տ. Ատոռեանծատուր Սրբազանին գրած պատմութեան արժանի գովեստ և յարգ կ'ընծայէ։

Ծ. ԽՄԲ.

Հրաչից, Աւանդութեանց, պատմութեանց մէջէն՝ կ'անցնինք Հաւատոյ պալատաց, Կրօնի ապարանաց, Հայրապետական դահլճաց առջևէն, այդ ահաւոր ու վտառյեղ տեսիլներն այնքան աւելի կ'սարսռեն հոգիդ երկիւղած-ութեամբ ու հիացման երկարատև դղրդումներով, որքան աւելի յիշէ մարդ այն պատմական դարերն ու սերունդներ, որք իրենց ահաւոր ու վտառյեղ դէմքերով, անցած դարձած են նոցաչուրջ։ Ոչ նուազ հիացմամբ կ'դիտէ մարտ և այն հոյակապ զանգակատանց գոթական յուրաններ, որք, քան զամէն դաստակերտներ դերամբարձ, այդ ահեղաշուք տաճարաց կողերն ի վեր կ'խոյանան հորիզոնահերձ, ամպոց ու չանթից հրամանատար յաղթական քառաթեւով մ'երկնաթռիչ։ Քառաթեւ՝ որ ամենակալ Աջոյ մը պէս դըրկած զմայլացող հոգիդ, իրեն հետ ամպէ ամպ, աստղէ աստղ կ'վերացնէ, յԱստուած տանելու և նորա մէջ ընկլուզելու. և անտի՝ ի բարձանց յաւիտենական Քահանայապետի մը պէս բազկատարած առաւօտ և երեկոյ, հոսելու համար իւր երկնադեղ օրհնութեանց տարափներ առ ոտս իւր զետնամած խոնհարող ճակատներու վրայ։

Կ'ճեղքենք, կ'ճեղքենք մահոչինեբոս, մղձաւինեբոս խաշորատխումբ ամբոխը, որ Գետ-Յորդանանու պէս յորդուն, և մեռեալ ծովուն աղտաղտին կոհակաց պէս թանձր են ու կպրահոտ։ Եհովաի և Մէսիայի այս տաճարաւիր Ոստանին մէջ, քալելէ աւելի ծնրադրել, բարևելէ աւելի խաչակնքել, խօսելէ աւելի աղօթել կ'պարտիս։ Ձի ո՛ւր որ կոխած ես Յիսուս տաճար մ'է կանգնած հոն, ուրկէ որ անցած ես մարդարէ մը հոն մատուռ բարձրացած, ուր աղօթած ես սուրբ մը կամ նստած ես սրբուհի մը հոն ուխտատեղի մ'է սահմանուած. և Երուսաղիմայ մէջ չկայ գրեթէ վայր մը ուր Մարդուն Որդին քալած չլինի, ուր մարդարէք կամ սրբասուրք պաշտելի յիշատակ մը թողած չլինին։ Տունէ աւելի ժամատուն, վանատուներէ աւելի վանատուն կայ։ Աչխարհականէ աւելի կրօնականք կ'վխտան։ Այնպէս որ կարծես թէ հոս ամեն մարդ վարդապետ, ամեն կին մարգապետ, ամեն մանուկ դպիր կամ տիրացու է։ Միակ դպրոց մ'ունին։ Եկեղեցին է այն։ Միակ ալ ուսում մը, որ նաժիշտն ու ախալղին են բոլոր այլ ուսմունք։ Աստուածարանութիւնն է այն. գիտութիւնն Աստուծոյ և հոգւոյն, առաջինն և վերջինն յաւերնայն գիտութեանց, այն՝ որ կ'սկսէ զամենայն, այն՝ կատարէ զամենայն, այն՝ որ կ'բովանդակէ զամենայն։ Այնպէս որ եթէ

միակ սրբազան բառ մը բացատրէր երբէք Աթոռոյն, թէ մարդուն առնչութիւնները Աստուծոյ հետ, թէ Աստուծոյ առնչութիւնները մարդուն հետ, մարդկային բոլոր լեզուք և դպրութիւնք պիտի մեռանէին չրթանց վերայ, չպիտի ունենային այլ ևս ըսելիք մը, ամեն ինչ ըսուած պիտի լինէր։

Երուսաղէմ «Խոչ Եբէ՛» Պրոպատիկէին մէջ նետուիլ է։ Հոն կ՚ընդունին հոգւոյդ բոլոր աղտերն ու ախտեր. կ՚զտուին կրքեր, փրփուրը կ՚ցնդի և մրուրն ի յատակ կ՚սուզի։ Ուղիդ կը լինի Նահապետին երազած սանդուխը, յերկրէն յերկին ձգուած այն երանելի ոսկեկամուրջը. ընդ որ նահապետական մարդիկ հրշտակի ոտքով այնքան ընտանեբար կ՚ելնէին կ՚մտնէին եհովային քով, որքան իրենց հայրենի վրանին դռնէն՝ ծնողաց քով։

Ս. Տեղիքն, Աստուածաչունչի պէս բան մ՚են, զորմէ որքան չատ բաներ խօսած լինին, զոր որքան չատ քրքրեն ու պեղեն, դարձեալ կ՚գտնուի ըսելիք նոր բան մը, չհաղորդելի նոր ոսկերակ մը։ Յիշատակք և յիշատակարանք, գեծեալք թէ անեղծք, կանգուն թէ աւերուն. տեսարանք աստ ամենք, որք՝ աչքիդ առջև, որք՝ գլխուդ վերև, որք՝ ոտքիդ վերև և որք՝ շուրջ դքև մօտ թէ հեռուն, կ՚տարածին, կ՚թաւալին, պատկերներ են ամենքին այնքան մեծապայծառ, աստուածաշունչ և երկնաձառ, որք վեհի, վսեմի, ահեղի, չքեղի, տխուրի, հրաշալեղի, չնորհալեղի, սրտաչարժի, հոգեյոյզի ներչնչումներով կ՚լնուն հոգիդ, որ կ՚յորդի. կ՚խանդավառուն երևակայութիւնդ որ կ՚թռչի, կ՚լարեն մտքդ, որ խոյանի և կ՚սաւառնի ցայնժամ քեզ անծանօթ լուսաչխարհաց մէջ։ Զգացումը սրտիդ մէջ անճառ բանաստեղծութեան մը, և սիրտդ կրծիդ տակ սերտրի մը երկնաթել տաւղին կ՚աղէկոխի։ Խօսքեր չրթանդ վերայ ալէկոծուին, մեղեդ իներու կ՚ոգեշրջին։ Երդարանդ կ՚լինի չարական, ընթերցարանդ կտակարան, զբօսավայրդ տաճար։ Երկիրն՝ երկինք և երկրաքաղաքացին կ՚դառնայ երկնաքաղաքացի։

Աչխարհի բոլոր հաճոյք, վայելք կ՚թօչնին վաղախամար ծաղկանց պէս չուրջդ. ներսդ, յիշատակացդ ու անցելոյդ բոլոր եդեմներուն մէջ։ Մովսէս քան զՀոմեր, Սողոմոնի Երգ–Երգոցը քան զՎերգիլեան Հովերգութիւններ, Դաւիթ քան զՊինտար, Յոբ՝ քան զՍոփոկլ. աւելի վսեմ կ՚ոգեխօսին քեզ։ Զի մինչ սոքա դէպ ի վար կ՚քարչեն, կ՚սողացնեն մարդը, նոքա վեր կը բառնան կ՚սլացնեն հոգիդ։ Եւ բուն մարդը, մարդը ամբողջ հոգին իսկ է, ո՛ւր չիմէ հոգին, մարդն հոն է։ Երուսաղէմ, հա-

ւատոյ և կրօնի աստուածային այս խանձարուրը՝ սիեպերա-
կան հոգեւոնն է։ Ո՛վ որ հոգի ունի, հոգի քրիստոնէի, հոգի
ճշմարիտ Հայու, ահ՛ձկանօք սիրելու է, կենացը մէջ, եթէ ոչ ա-
մեն տարի, գէթ անգամ մը ուխտի գալ Քրիստոնէութեան այս
մայրաքաղաքը, և տարագիր սաղմոսերգուին պէս աղաղակել.
« Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի և պիս աջ իմ։»
Ապա որ հայ քրիստոնեայ որ ունի աչ, որով կ՛հանէ խաչ մոռ-
նալու չէ Երուսաղէմը։ Երուսաղէմ ուխտի երթալը՝ Աստուծոյ
տեսութեան երթալ, Յիսուսի այցելութիւն տալ է։ Եթէ ըսեմ
որ, երկրի վրայ Աստուծոյ պալատ այցելութեան այս պարտէզը անվիճ-
ելի քաղաք քրիստոնեայն՝ պարտաղանդ հոգի մը պիտի լինի երկնից
մէջ։ Հաւատոյ դէմ խօսած չպիտի լինեմ։

Երուսաղէմայ մէջ հայոց պետական Ս. Տեղիներէն (դիտնալու
է թէ Երուսաղէմայ մէջ կան տեղեր որք մեկէ աւելի քրիստոն-
եայ ազգաց միանգամայն կ՛վերաբերին) նշանաւորն է Ս. Յա-
կոբայ վանքը, որ իսկզբանէ տուեր էր այն Յակոբին, զոր Ս.
Գիրք և Ս. Հարք Եկեղեցւոյ կ՛անուանեն Յակոբ ոբդոբ, Տեառն
եղբայր, Բրէսպոսէ ոգէական, Յեռոսէ եղբայր, որ թէ Յիսուսէն և թէ
Առաքեալներէն ընտրուած ձեռնադրուած է, առաջին եպիսկո-
պոս Երուսաղէմայ, յամին Տ. 34, ինքն՝ 12 Առաքեալներէն չի-
նելով՝ Առաքեալներէն առաջ, Քահանայապետ յաջորդած է
Յիսուսին, իբրև իւր եղբօր կամ աղգականին։ Ասկէ ծագում
առած է անշուշտ և առ յապա հայրապետական յաջորդութիւն-
ները՝ թագաւորական յաջորդութեանց պէս, ցեղային պահել
ջանալու սկզբունքը։ Այլ է Աւետարանիչ Յովաննէսին եղբայր,
Յակոբ Առաքեալը. (սոքա երիցբին եղբարք Հերեթեայ որդիք
կ՛կոչուին և 12 Առաքելոց թիւէն են) զոր գլխատեց Հերովդէս
Պաղեստինացւոյ Կեսարիոյ Պաղտն գիւղին մէջ, և Տիրոջ հրշ-
տակը առնելով անոր պատուական գլուխը բերաւ Երուսաղէմ
և դրաւ Ս. Աստուածածնայ տունկ, ձիշտ այն պահուն յորում
Տիրամայն Մարիամ, Տեառն եղբայրն Յակոբայ և Աւետարանիչն
Յովհաննէս՝ արդէն Ս. Հոգւոյն աղդմամբ նախատեսած լինե-
լով Սրոյն գլխատումը՝ կ՛աղթային նորա մահը գլխատեալ Ա-
ռաքելոյն գլուխը խնամքով անխափուելցաւ Տեառն եղբայր Յա-
կոբայ կալուած մէջ, որոյ վերայ կառուցուած է, Դ. Դարուն
մէջ, Տրդատ թագաւորին ծախիւք հայոց այս հռչակաւոր վան-
քը, և Ս. Յակոբայ գլուխն ալ Եկեղեցւոյ հիւսիսային կողմը ա-
ռանձին մատուռի մը մէջ աւխտուած, հռչակաւոր ուխտատե-

դի մ՚է։ Յիսուսի եղբօր և Յիսուսի առջինեկ յաջորդ Յակոբ Հայրապետին Եպիսկոպոսական Աթոռը՝ որ քրիստոնեայ եկեղեցւոյն հնագին և թանկագին մի յիշատակն է, տակաւին կեցած է ցայսօր հայոց Եկեղեցւոյն մէջ՝ վերի դասը. քանի է հայոց պատրիարքինը։ Առաքելական այդ Աթոռոյն վերայ՝ տարին մի անգամ Տեառն եղբօր Արբոյն տօնին օրը կ՚նստի միայն հայ պատրիարքը և այն ալ այնքան միայն որքան տևէ «Փառք ի բարձունս»։ Երուսաղիմայ Ս. Տեղեաց մէջ՝ հայոց այս վանքը հռչակաւոր է չէ թէ անոր համար որ միւս քրիստոնեայ ազգաց Երուսաղիմայ մէջ ունեցած բոլոր վանքերէն աւելի հարուստն կամ գեղեցկակերտն է, դի յայտնի է թէ միւս ազգաց վանքերը՝ իրենց թագաւորաց կամ վեհապետաց կամ մեծամեծ իշխանաց կողմանէ նիւթապէս և բարոյապէս միշտ պաշտպանուած, գրամական ահագին գումարներով օժտուած, անդադար տաճկի կերպով հարուստ և ազդեցիկ են քան զմերն և զմեր բայիններն, մինչդեռ հայոց վանքը ի սկզբանէ ցայսօր ծանր պարտուց տակ հեծող է, մեր Ազգին ազգատուբեան պատճառաւ, այլ անոր համար պատմական տեսակէտով բոլոր ազգաց սեպհական Ս. Տեղեաց մէջ նշանաւորն է և թանկագինը, դի Յիսուսի եղբօր Տունն է եղած. Քրիստոս յաճախ հոս բնակած, ղբօսած, նստած, եղած է։ Յետ Մահուան և Յարութեան իր Միածնին, ինչպէս առաջքան զայն ևս, հոս ապրած է Աստուածածինը, հոս հաստատուած է քրիստոնէութեան առաջին Եպիսկոպոսան, Քրիստոսի եղբօր Առջինեկ Աթոռը, որ տակաւին կայ և կ՚մնայ. ինչպէս ըսինք։

Ս. Յակոբայ վանքը որ Քրիստոսի և Քրիստոնէութեան չափ հին է, անանց չափ ալ բազմաչարչար եղած, պիտի մնայ նաև անյուշ Յիսուսի Եկեղեցւոյն չափ ևս անխարխար ու տևական որ քան Հայոց Ազգն և վանուց միաբանութիւնը մնայ հաստատ և կրօնի մէջ անխարխար և տևական, որպէս երեկ նոյնը և վաղը։ Պարագրեր ըրած է, և պարտուց մայր գումարին բազմապատիկը տակաւնուր վճարելով ձեռքէ չէ հանած պարտուց վճարման համար՝ սկսեալ Եկեղեցւոյ անօթիներէն մինչև իսկ միաբանից օրապահիկին դինը առած, անանց պղեսաները ծախած, դանէ դուս, յետին չքաւոր ազգատին սկս մուրալ չանձն առած է։ Պատմութիւնը կենդանի վկայ է թէ Երուսաղիմայ պատրիարքներէն ղազարէն Գրիգոր, այդ համլէթէն նոյն տաճկի Պօլսոյ Կալֆ Յովհաննէս պատրիարքին, ինչպէս ծանրակուռ

չղթան վիզն անցուցած, Պօլիս եկած, Մայր Եկեղեցւոյ դրան մէջ սովորական աղքատաց կարգն անցած, Թագաւ ի ձեռին տա-րիներով մուրացած է և գանձանակին ալ առած Պօլսոյ մէջ թաղէ թաղ ժուռ եկած է վանուց պարտքը վճարելու և վանքը Աղդին ձեռքէն չի հանելու համար։

Այսն անունք որ Երուսաղիմայ վանուց տարօրինակ պարտուց վրայ կ'զարմանան և այս մասին վանուց միաբանութեան պա-տասխանելի հանգամանքներ կ'ընծայեն, կարի կ'անիրաւեն։ * Երուսաղիմայ հայոց Միաբանութեան և հաստատութեանց դէմ խօսելու չէ· գայն անձամբ չեն եկած, տեսած ու ճանչած։ Այդ պարտքը ժամանակին և աղգային վիճակին բնական և տեղա-կան հանգամանքներէն ծնած է։ Մեր ըսածէն աւելի սիրտ ըսէ ով որ կարդայ Երուսաղիմայ վանուց ժամանակագրական Պատմութիւնը, զոր յօրինած է Ս· Յակոբայ տաղանդաւոր մի-բաններէն Գեր· Ատուածատուր Եպիսկոպոսը· գործ գնահա-տելի և բազմարժէք, նա մանաւանդ որ իւր տեսակին մէջ ղը-բեթէ առաջինն է պարտենակութեան ճոխութեամբը, պատ-մաղրեալ անցից, իրաց ճշտութեամբ և պատմագրին անժխտե-լի հմտութեամբը, ճշմարտախօսութեամբն և ձեռնհասութ-թեամբը։

Հայ մը՝ անթաց աչօք և անխռով չէ կարող անցնել տող կամ դարձնել թերթ Ատուածատուր Սրբազանին Երուսա-ղիմասատուամ երկհատոր Մատենին մանաւանդ վերջին և մե-ծագոյն մասը ընթերցած առեն։ Պատմական այս գործոյն նը-

* Թող ներէ մեզ յօդուածագիրը Ո-էրտուրն ըսել, որ անչուշտ չլինիր ոչ ոք վանուց և ոչ Միաբանութեան դէմ, այլ ընդհակառակն արդա-րութեան գործ մը կատարած կ'լինի, երբ յուի մատակարարութենէ, ան-հետաքրքրութենէ և շռայլութենէ յառաջ եկած պարտուց մասին խօսի, ինչպէս խօսած է երբեմն Ա· Մոմսէն, գործաշրջելով վանուց զեկա-վարներն ալ և նոյն սխալմանց մէջ դլորելէ, սխալմունք՝ որոց գարմանը դանելու համար այնքան կ'տքնի արդի Ս· Պատրիարքը։ Ոչ նուազ նպաս-տած են այժմեան զգուշաւոր և գոհացուցիչ վիճակին ժամանակին հրա-տարակուած քննադատութիւնք նախորդ անշահ գործողութեանց մասին, բայց եթէ իրրև հիմնական փաստ ընդունուի Պ· Ո-էրտուրին այս առա-քութիւնը թէ՝ ժամանակն և ազդային վիճակն, էական և փոխուն հանգամանք վերագրելի են եղած պարտուց ահագին գումարներ, այն ժամանակ բաց գուռ մը պիտի թողուի ապագայ անարդարանալի ծախուց, քանի որ այդ-պիսի հանգամանքներ դիւրին է հնարել։

Ծ· ԽՄԲ·

կատմամբ՝ Հեղինակին հմտութիւնը և ճեռնհասութիւնը կատարել ենթարկող կարծիքներ յայտնուած են հրապարակաւ, սակայն դատապարտ և լոկ դէպրանաց արդիւնք են: Ամէն մը պիտի խօսինք և մենք սոյն պատմական գործուն նկատմամբ իր վեր հանելու համար նորա իսկական և բաղդատական արժէքն քննադատական վերլուծմամբ մը: Պէտք է կանուխէն դիտնալ թէ այս պատմագէտ հայ եպիսկոպոս, ինչ որ գրած է և պատմած, բերնով իսկ կ'պատմէ և կ'թուէ այնքան անցքերը ճիշտ ու դիւրին որքան իւր կենսագրութիւնը և որքան իւր մատները: Համառօտ պատմագէտ է Աստուածատուր Սրբազան և ոմն որ անճամբ խօսի հետը կամ խօսեցնէ պինքը, կարող է տալ մեր վրճիռը: Եւ Պատմագիտի հմտութեան աստիճանը չափելու ճշտելու համար մենք ասոր անոր կշիռքին պէտք ունեցողներէն չենք, մենք ալ պատմասէր ենք և պատմուսոյց:

Անցնինք վանուց պատմական մասէն և անոր տաղանդաւոր Պատմչէն, Նորա Ճարտարապետական յօրինուածքին:

(Շարունակելի) ՈՒԽՏԱՒՈՐ

ՀՆՉԱԿ

Պատուհանին առջեւ նստած էր խոնա՛ն
Ցերկնից կապոյտ սուզած աչերն երազուն,
Հերքն բոդած գունդգունդանաց գեփիւռին
Որ փայփայէր ոսկի այդ բեյրն ճերտագին . . . :

Դլխիկն մեղմիկ յեցած էր նի մի ճեռքին
Երա՛զք, խո՛ր բիւր ներա շուրջը կայտռէին. . .
Ջերդ անծանօթ ոգիք անտես երիւնագոյն
Որք պարէին կոսին շուրջըն զմայլո՛ն . . . :

Հոգիս նրմուէր տեսլեամբն ջքնաղ աղջկան.
Սիրտս անմուն վսեմ յուզմամբք տրոփէր
Եւ կեանքս ալ գոգ վատոյժ կրծքիս կը ջուէ՛ր:

Հեռո՛ւ իրմէ, ծնրադիր զինք դիտէի.
Մինչ յիս դառնայր ոսկեվարս այդ վեհարփի,
Եւ մի շաղո՛վ թաղոյր գիս կո՛յր, անկեցնա՛ն . . . :

ԲԻՒՐԵՂ.

ՉԷ ԻՆՉ ՊԷՏՔ ԲՆԱՒ

Չէ իմն պէտք բնաւ
Ոչ թագ, ոչ պսակ,
Այլ լոկ հոգի մ'որ
Շնորհէ իմն նոր օր:

Չէ իմն պէտք բնաւ
Օդ, շունչ դառնաւէտ,
Այլ լոյս կենսատուր,
Լոյս մտաց տրիտուր:

Չէ իմն պէտք բնաւ
Ակնարկ մոլեգին,
Այլ նշոյլն աստղի,
Որ իբր ցօղ փայլի:

Չէ իմն պէտք բնաւ
Հուր, բոց վաղանցիկ
Այլ շնորհ երկնային.
Անանց սիրոյ գին:

Չէ իմն պէտք բնաւ
Նենգ, սին դայլայիկ
Այլ շէշտ պուլպուլի,
Հոգւոյն խօսնակի:

Չէ իմն պէտք բնաւ
Ոսկի, սուտ գոհար,
Այլ գանձ մեծ ճոխոյն,
Վեհ զգացմանց բոյն:

Չէ իմն պէտք բնաւ
Նշան, փառաց շուք,
Այլ բիբ լուսաշող,
Անմեղ կենաց շող:

Չէ իմն պէտք բնաւ
Բեհեզ, արդ ու զարդ,
Այլ վարդ մանիշակ
Ջուտ սիրոյ գուշակ:

Չէ իմն պէտք բնաւ
Մարգրիտ, օդ, մանեակ
Այլ բանկ սրտի անուր
Որ կայ միշտ ամուր:

Եւ բէ սոյն անձնուկր,
Անգիւտ եմ, չանցուկ,
Ո՛հ; իբր գոյնիկ
Փակուիր իմ սրտիկ:

Վ.

ԱՆԱԼԻ ՍԻՐՏ

Երբ քեզի ըսեր որ՝
Թէ մեծ աչքերն քու աղուս՝
Արեգակ մը կ'ինդուս
Նոյն իսկ սառած կամ անդոզ
Սիրտերուս վրայ.

Նախ կ'շիկնիս. այտերդ ջինջ
Կ'կարմրին, պահ մ'ամդին
Կ'նայիս կամ բե գետին,
Եւ վարդ բերանդ ջգիտեմ ինչ
Կ'մրմռայ:

Երբ քեզի ըսեր որ՝
Թէ քու ձիւնե լանջ փքուն
Կրնայ ստեպ հանգիստ քուն
Կորզել նոյն իսկ անողոք
Մարդեն յամառ.

Դեմդ փորր ինչ կ'յուզուի,
Ապա նայուածք մը քու շուրջ
Դարձնելով արագ յուրջ՝
Թերեւս կ'ըսես իւրովի
Ըհ՛ն, ի՛նչ յիմար:

Այլ քե քեզի հարցնե որ,
Մի վարանիր ըսելու,
Թէ սերն մի սին այցելու
Է քեզ համար, քե պանդոկ
Մ'է քու սիրտն ուր ամեն օր
Կ'օթեւանի սեր մը նոր . . . :

Մայիս 1892 ՄԻՀՐԱՆ ՎԱՐՈՒԵՏԵԱՆ

ՓԾՐԱՆՔ

Իմաստասիրութիւնը օգուտ մ'ունի, կ'մխիթարէ։
ՎՕԼԴԵՌ

Շատ աղօր պատմութիւն մը կար գրուելիք. այս է հակառակութեանց պատմութիւնը։ ՆՈՅՆ

Մեզ ամեն տեսակ ուսուցիչներ կ'տան, բաց ի այն ուսուցիչներէն որ մտածել կ'ուսուցանեն։ ՆՈՅՆ

Նախատիպ մտածումներ — խորհողին չատուկ դիպողութիւններէն կամ մտաւորական աշխատութենէ հաղուած մտածումներ — շատ տեսած են կանանց գլուածոց մէջ։ Ձ· Ս· ՄԻԼ

կանանց գիտութիւնն, մարդոց գիտութեան պէս, պէտք է յարաբերութիւն ունենայ իրենց պաշտօնին հետ։ Իրենց զբաղմանց տարբերութիւնը պարտի կազմել իրենց ուսմանց տարբերութիւնը։
ՖԵՆԷԼՕՆ

Ցետին ծայր համեստ եղիր, օրիորդ, գիտութեանդ մասին, եւ խնամօք պահէ, մանաւանդ ուրիշ կանանց առջեւ, որ գիտես բաներ որ անոնց անծանօթ են։ Տ՚· ՌԻՀՕ

Կարելի է զգացումը լուսեան դատապարտել, այլ երբէք անոր տանման տալ։ Տ՚· ՆԷՔԻՐ

Իմաստունը կ'զանգտնի կամ կ'գտնուի թէ կ'ստուի, կամ կ'սիրուի։ Իմաստունը իր ներշնչած զգացմանց վրայ չխորհիր, այլ զգացածին վրայ։ Գիտէ թէ ստուիլը չէ ոխտ, դառն ու վշտադին բան մը, այլ սաթլը· սիրուիլը չէ ամենէ անուշ, ազնիւ, մեծ բանն, այլ սիրելը։ Տ· ՍԴԷՐՆ

Միացած՝ մարդ մեւ կին մ'ամբողջութիւն մը կ'կազմեն, իսկ բաժնուած՝ մկրատի կիսոյն կ'ճանաչին որ միայն մեծոցի տեղ կրնայ ծառայել։ ՖՐԱՆԿԼԻՆ

ԻՆԲՆԱՐԵՐ ՀԵՐԲՈՒՄ ՄԸ

. . . Խմբագիր, *

Ֆաջ կ'յիշեմ որ գրեթէ երկու տարի առաջ՝ Պ. Գարամեանց Աբյաֆանէի մէջ Թուրքիոյ հայոց գրական և դպրոցական վիճակին վրայ ընդհանուր տեսութիւն մ'ընելու առթիւ, չատ աննըպաստ տեղեկութիւններ հաղորդած էր տեղւոյս ազգային վարժարանաց մասին, յատկապէս մեր տեսչական պաշտօնին ակնարկելով, և Աբևելէ արտատպած էր այդ տեսութեան մի մասը։ Այն ժամանակ առ Աբյաֆանէ ուղղեալ հերքում մը գրեցիք, ցոյց տալով որ Պ. Գարամեանց պղտոր տեղեկութեանց վրայ հիմնուելով նշաւակած էր մեր տեսչական պաշտօնը, որ, սակայն, այնքան արդիւնաբեր եղած է։ Աբյաֆանէի մէջ չերևցաւ մեր հերքմնագիրը, այլ Ա. Մաղաչ մէջ։ Այժմ նոյն ինք գիտնական յօդուածագիրն՝ Պ. Գարամեանց, մեր Աւոդնէն Տնեսութեան դասագիրքն ուշադրութեան արժանի դատելով, ուրախ ենք ըսելու որ արդարութեան պարտ մը կ'կատարէ յայտարարելով՝ թէ նէյց յոպշտաճ ժամանակ կատարուած նկատողութիւնը՝ ալէտք չէր էբլա Վէրատրան ընդունել և թէ այժմ գոհ է, որ առիթը կ'ներկայէ էր անկեղծ համբոյրը պրպտյայելու քաղաքացիական էրակցին, այսինքն Զեզ։

Այսպէս, Պ. Խմբագիր, ճշմարտութիւնը, թէև փոքր ինչ ուշկակ, յաղթանակը կ'տանի միշտ, և Պ. Գարամեանց, որ կերպով մը կ'խոստովանի թէ նորագոյն մանկավարժներէ մին (Պ. Յ. Տէր-Միրաքեանց) իրեն էբլա գոպո հղպրեր էր խոչոր սուտ մը, իր ճշմարտասիրութեան և աղնուութեան մի ցած ապացոյցը կուտայ այդ խոստովանութիւնն ընելով։ Ի հարկէ՝ կարևորութիւն չպիտի տայի և ես ոչ իր առաջին և ոչ նոր գրածին եթէ այնպիսի ծանր զրպարտութեան թարգման եղողն մի աննշան և անկարևոր անձ մը լիներ։ Եւ այժմ՝ երբ Պ. Գարամեանց այդ

* Թէև սովոր չենք մեզ ուղղեալ գովասանական նամակներ տպել և մեր անձին վրայ խօսիլ, քանի որ չկայ այնքան անհրեշտ և անախորժ բան մ'որքան են շարունակ յիշել, բայց այն նամակն երբև բացատրութեան և հերքման պարտ կ'դրուի մեր վրայ հրատարակելու։ Ս. Խ.

բացատրութիւնը տալով կ՚յարէ թէ — չուզեր ենթադրել որ անգամ մը պարսաւածին այժմ գովում է — պարզապէս ըսել կ՚ուզէ որ իր պարսաւն իր Խզմիրէն ստացած անհիմն և կրքից յառաջ եկած տեղեկութեան վրայ կայացած էր։

Եւ ի՞նչ կերպով կ՚գնահատէ ձեր գրական և մանկավարժական գործունէութիւնը, Պ. Խմբագիր, թերևս գիտէք, եթէ Աբդուլ-Համիտի ներկայ տարւոյն 40րդ համարը ձեր ձեռքն է անցած։ Անտարակոյս ձեր սոլորական համեստ և լուին աշխատութեան եղանակը չպիտի ներէ ձեզ երբէք ծանօթացնել ձեր ընթերցողներուն Պ. Գարամեանցի պատուարեր գնահատութիւնն որ, ըստ իս, մեծ արժէք ունի, գալով արժանի գրագիտի մը գրչէն, բայց ներեցէք ինձ մէջ բերել իր մի քանի դիտողութիւններն որ ձեզ համակիր և ընդհակառակ աչակերտներուն, որոց մին լինելու պատիւն ունիմ, այնքան խնդութիւն պատճառած է։

Պ. Գարամեանց՝ միշտ Ա-ոնց Տնչեսութեան գործի առթիւ, այսպէս կ՚սկսի իր յօդուածին.

Տաճկահայոց գրագէտներն և մանկավարժների նահապետն է Մ. Մամուրեան։ Մեր դարու վերջին կէսի նշանաւոր հայ գործիչներից քիչերն են այնքան բազմադիմի և արդիւնաւէտ գործունէութիւն ունեցեր, որքան Պ. Մամուրեանը։

Քանուհինդ տարուայ անընդհատ գործունէութեամբ վարժարաններում մի ամբողջ սերունդ է պատրաստել, որին առաջնորդել է և այժմ էլ առաջնորդում է իբրև հրապարակախօս և գրագէտ։

Մ. Մամուրեան իբրև մանկավարժ այնպիսի նշանակութիւն ունի տաճկահայոց մէջ, որին զուգահաւասարը չկայ արևելեան հայերի մանկավարժական ասպարիզում։ Մեր ունեցած ականաւոր մանկավարժների ուղղութիւնն առաւել աւետական է, մինչդեռ Մամուրեանը աւետական մանկավարժութեան ասպարիզում քիչ է աշխատել, նա բառի բուն նշանակութեամբ դպրնոցական մանկավարժի գործն է։

Մամուրեանի դերձունէութիւնն իբրև գործնական մանկավարժի գործելու համար, պէտք է աչքի առաջ ունենալ նորա յօրինած դասագրքերի ցուցակը, որ մեր և տաճկահայոց դրականութեան մէջ եղած անջրպետի ընդհին հարիւր կարող է լիակատար լինել։ Այսու ամենայնիւ՝ մենք յառաջ ենք բերում այդ ցուցակն, անգամ առիթ չը փախցնելով բողոքելու այն անտարբերութեան դէմ, որ մեր վերգրոնի (Թիֆլիզու) հասարակութիւնը ցոյց է տալիս դէպ ի հայ գրագիտութիւնը, չմտածելով հիմնարկել մի հայկական գրադարան։»

Թերևս ըսէք, Պ. Խմբագիր, թէ Պ. Գարամեանց այդ մասին կ՚սխալի, վասն զի՝ որքան որ ձեր դասագրքանքն ունին ներքին արժէք և լեզուի պարզութեան ու բացատրութեան կողմէ անհամեմատ դիւրութիւն կ՚ընծայեն նոր ուսանողներու, սակայն

նորաբոյն ռահվիրայի չէ՞ր է՛ւնց շրջիլ, այլ լոկ իր մանկավարժական ծաւրագոյն իմաստութիւնն ու հայկաբանական հեղինակութիւնը ցոյց տալու համար բոլոր ձեր դաստիարակներն միահամուռ հալածեց մեր ազգային վարժարաններէ և անոնց տեղ ներմուծեց այնպիսիներ որոց առջև ոչ միայն աշակերտները այլ և դաստատուները չփոխած կ՛մնան և ատիպ կ՛ատիպուին նոր ռահվիրային դիմել ի բացատրութիւն, և որուան ոչ ինչ չբացատրեր։ " Բայց մի վշտանաք, երբ ոխակալութեան և անձնասիրութեան օրինակ կ՛կանգնին այնպիսիներ որ սիրոյ և համեստութեան դասեր տալու կոչուած են։ Այս է այժմ նորաձեւութիւնն։

Եւ ապա Պ. Գարամեանց կ՛յիշէ ձեր Իրաքանչիւրին, Ընթերցողներն, Շարադրողներ բանալին, Պատմութիւնն եւ և կ՛յարէ։

Եթէ աչքի առաջ ունենանք, որ Մամուրեանն անգուլ գործել է իբրև հրապարակագիր և մանաւանդ է դեղեցիկ գրականութեան զարգացման ևս, այն ժամանակ միայն կ՛ըմբռնենք այս մեծ գրագէտի ամբողջ արժէքը։

Սակայն նա անցեալ փառաց դափնիների վրայ հանգչողներից չէ, ուստի չարունակում է դեռ առյդ երիտասարդի վայել եռանդով գործել իբրև հրապարակագիր և մանկավարժ մտաւորական։ Սրա ապացոյց է այն մեր առջև դրուած նոր հեղինակութիւնը, որից մի անկախ գլուխ, հայ հնոջ ուղղած ուղերձն, արդէն ծանօթ է Աբնոպուսի ընթերցողներին։ »

Եւ Պ. Գարամեանց Աւարնի Տնտեսութեան նշանակութեան և ուսուցման եղանակին վրայ մի քանի դիտողութիւններ ընելէ հետև, այդ գործին յաջողքեանն ամբողջովին կ՛արտադրէ իր յօդուածին մէջ խոստանալով չարունակել իր քննադատութիւնն։

Եւ անչուշտ ձեզ սիրողներն իրրև տարփոզանք չդիտեր առնուն մէջ բերուած այս նպաստաւոր խօսքերն, զի տարփոզանքի պէտք չունիք, քանի որ թէև ազգային վարժարաններէ հեռի, կ՛չարունակեք այլ վարժարաններու մէջ ձեր օգտաւէտ պաշտօնը և հայ մանկտւոյն կրթութեան կ՛աշխատիք։

Շատեր ինձ հետ փափաքելով տակաւ տեսանել սոյն նամակս իրրև յայտարար իրենց ղգացմանց,

Միամ յարգանօք

Մեր Ձեր վաչեի աշակերտ

Գ. Ս.

*Մենք կ՛ուզենք հաւատալ որ ոչ է նէտ ըրժնել և ոչ ևս ըսուն ընտրելու կ՛գործանն մեր հայուածոյրդներն, այլ ապիտութենէ և նորասիրական մտմանջէ մղեալ, նորասիրութիւն զոր իրրև մանկավարժութիւն կ՛ծախանն։ Բնաւ մեր փոյթը չէ եթէ կ՛արտաքսուին տեղւոյս վարժարաններէ մեր դաստիրքն, որոց ապառման կնդրոնն եղած է Պոլիս և այլուր։ Ս. Խ.

ԱՄԱՍԻՈՑ ՀԱՑՈՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Վերջերս ճանապարհորդութեան մ՚առթիւ Ամասիա հանդիպած լինելով, իբր հայ անհատ հետաքրքիր եղայ տեղւոյն Ազգային կենաց, այսինքն դպրոցաց կանոնաւորութեան և Ազգ. Վարչութեան ընթացից։ Շրջեցայ վարժարաններն, որք կը գըտնուին տեղւոյն երից Եկեղեցեաց ծոցը ըստ սովորութեան, և չեմ կրնար առանց վշտի յայտնել ծաղկոցաց ողբալի վիճակն, բաց ի Ս. Նիկողայոս Եկեղեցւոյ ծոցին մէջ գտնուած վարժարանին և ծաղկոցէն որոց բարեկարգութիւնն ու կանոնաւորութիւնն գնահատելի են։ Սոյն վարժարանն որուն դրսի ճակատն խոշոր տառ արձանագրութիւն մը կը նշմարուի, « Միացեալ Վարժարան, Կեդրոնական և Դպրոցասիրաց Ընկերութեան » մականունով կը կառավարուի տեղւոյն հայոնուն Ընկերութեան Տեսչութեան կողմանէ ընդ հսկողութեամբ Փաղ. Ժողովոյ։ Սոյն Ընկերութիւնն որ կազմուած է եղեր թուականէս չորս տարւոյ չափ առաջ տեղւոյն բանիրուն և գործունեայ անձնաւորութիւններէն ամանց ջանքով, մի միայն նպատակ ունենալով նիւթապէս օգնել և հսկել վարժարանին ներքին բարեկարգութեան, ոգի ի բռին աշխատած է վարժարանն իր չորրորդ չրջանին թևակոխել տալ, ամենայն զոհողութեամբ։

Վարժարանն ունի երկու մնայուն դասատու և մէկ կառավարիչ ինչպէս նաև մի այցելու դասատու ևս։ Մնայուն դասատուք քնիկ գոլով, ոմանց բարեսէր անձանց չնորհիւ, ասկէ առաջ վենետիկ Մուրատ-Ռափայելեան վարժարանն խրկուած, ուսկէ չրջանաւարտ վերադարձած են ճիշտ այն պահուն՝ յորում վարժարանի Տեսչութիւնն պէտք ունէր իրենց։

Վարժարանին մէջ կը դասախօսեն Հայ. Թուրք. Փաղ. լեզուներն, ինչպէս նաև այլ և այլ դիտութեանց ճիւղեր։ Միայն նախակրթարանը կը պարունակէ 72 աշակերտ, բաց ի ծաղկոցէն որ 100է աւելի ունի։ Զմռնամ յիշել թէ ծաղկոցի դաստատուն, որ Սեբաստացի է, նպարտաւորեալ է ոչ միայն նախակրթարանի ստորին կարգերուն հայկարանութեան և թուաբանութեան ձկզբունքներն դասախօսել, այլ նաև ճայնագրութեան և երաժշտութեան դաս տալ վերին կարգերուն ալ։ Այս առթիւ չեմ

կրնար առանց ընդհակալութիւնս արտայայտելու անցնիլ վարժարանին Տեսչութենէն որոյ ընդհիւ Ամասիացիք Եկեղեցական երդոյ ընտիր ներդաշնակութեան մ՚ունկնդիր ըլլալու բաղդն ունին։

Կ՚ըսուէր նաև թէ վարժարանին չորրորդ չրջանն յառաջիկայ Յունիս ամսոյ վերջերը աւարտելով՝ տարեկան քննութիւնք պիտի կատարուին, ուրմէ չափ չրջանաւարտներ ընծայելով Աղբիւրին։

Առած տեղեկութեանցս նայելով, Դպրոցասիրաց Ընկերութիւնն կազմուած է Աղդ. Պատրիարքարանէն հրատարակեալ՝ Ընկերութեանց կազմական կանոնագրին համաձայն. վաւերացեալ Աղդ. Վարչութենէն և կախումն ունենալով անկէ։ Տարեկան բաժինն է մէկ Օսմ. ոսկի։ Կան անդամներ որք մէկէ աւելի կը վճարեն։ Իւրաքանչիւր անդամ անձնական պարտամուրհակաւ պարտաւորած է մինչ 4 տարի (առաջին չրջանի համար) ապահովել իր պարտք առ վարժարանն։ Յաւօք սրտի լսեցի թէ անդամներէն ոմանք չնչին առարկութիւններով կը մերժեն եղեր վճարել իրենց բաժիններն, ոմանք ալ ընկերութեան ընդհ. ժողովոյն մէկ Դիւանի և Տնօրէն խորհրդոյ անդամ չընտրուելնուն և կամ իրենց խելքէն վեր դպրոցական խնդրոյ մը մասին ըրած առաջարկութիւններն չընդունուելուն համար չեն հատուցաներ իրենց պարտքը, այսպիսեաւ վրէժ լուծած ըլլալու պարտաւելի նպատակաւ։

Կ՚ըսեն նաև թէ արդի Փաղ. ժողովոյ անդամք ալ նպաստաւոր դաղափար չունին եղեր վարժարանին չարունակութեան մասին, և մտադիր են եղեր մերժել տարեկան 50 լիրայի յատկացեալ դումարը՝ զոր նախորդ Փաղ. ժողովն որոշած էր վճարել կեդրոնական վարժարանի յատուկ կալուածոց հասոյթներէն։

Ներկայ Փաղ. ժողովոյ անդամներէն երկուքն չիչխալ 50 ոսկւոյ որոշումը չտալու համար նախորդ Փաղ. ժողովոյ անդամակցութենէն հրաժարած են եղեր առարկելով թէ՝ արտաքին անեւոյթ ձեռքեր արգելք կ՚ըլլան իրենց որոշմանց (անտարակոյս արտակեդրոն) դործադրութեան. սոյն էֆէնտիներն որ թուականէս 2–3 տարւով չափ առաջ յղացած են եղեր կեդրոնական անուամբ առանձին վարժարան մ՚ունենալու քմահաճոյքն, աւելի անուան սիրահար քան իրականութեան, ներկայ դասատուաց վենետիկէն վերադարձին, ուզած են երկուքն ալ

վարձել և կեդրոնական վարժարանը բանալ, ծրագիր մ՚որ տարեկան 150–200 ոսկւոյ կը կարօտէր, առանց ի նկատի առնելու թէ իրենց այս ընթացքն ոչ միայն վտանգի կ՚ենթարկէր Դպրոցասիրաց վարժարանն, այլ նաև մօտ տարիներս վարժարան չունենալու բաղդին կ՚դատապարտէր զՀմասիացիս· պի նիւթապէս ապահովեալ չեղած վարժարան մ՚անշուշտ 2 ամիսէն կ՚գոցուի, նոցա բանալիք վարժարանն ալ այս կարգէն պիտի ըլլար, և որովհետև մեր ազգային յատկանիշներէն մէկն ալ նորասիրութիւնն կամ նոր բաներու կարի հակում ունենալն է, կեդրոնական վարժարանն նոր բացուած է ըսելով, միամիտ ծնողք իրենց զաւակներն Ընկերութեան վարժարանէն հանելով հոն պիտի ղրկէին, հետևաբար մին յուսահատութենէն, միւսն ալ անկոպեքենէն ստիպեալ, երկուքն ալ պիտի գոցուէին· ահա այս է կ՚ըսէին պատճառն որովհետև էֆէնտիներն հրաժարելու պարտաւորած են, վասն զի ոմանք արմատն և հետևատես անձինք, ի նկատի առնելով Ֆաղ· ժողովոյ որոշման վըտանգաւոր հետևութիւնն և դէթ մի վարժարան կանգուն պահելու եռանդեամբ ըրած են կարելին որ սոքա հետևանս հրապարակէն և արդարև յաջողած են, զի յաջորդ Ֆաղ· ժողովը Ընկերութեան վարժարանին այժ առած են, տարեկան 30 ոսկւոյ գումար մը յատկացնելով, պայմանաւ որ՝ վարժարանն յետ այնորիկ յորջորջուի, « Կեդրոնական և Դպրոցասիրաց Ընկերութեան միացեալ վարժարան » և աշակերտաց թիւն վոխանակ 60ի բարձրացուի 100ի, նկատի առնելով որ այսպիսեաւ վերջացած է։

Արդ այս անգամ ևս յիշեալ էֆէնտիներ վերստին Ֆաղ· ժողովոյ անդամ ընտրուելով, մտադիր են եղեր հին վրէժը լուծել, այսինքն մերժել 30 լիրայի գումարն և այսպիսեաւ ստիպել Ընկերութիւնն փակել վարժարանն։

Յիշեալ էֆէնտիներն վոխանակ 30 ոսկին չտալու և այսպիսեաւ իրենց քինու և ատելութեան թոյնը վարժարանին վրայ թափելու, պարտին ի նկատի առնուլ թէ Համասիան կը պարունակէ 1200է աւելի վարժարանի կարօտ տղայք, և վոխանակ վարժարան փակելու, քանի մը վարժարաններ ևս պէտք են, վասն զի 300է աւելի մանկտիք կը յամախեն Ձէդութեաց վարժարանն։

Արդ՝ Ֆաղ· ժողովն հիմակուընէ սկսած է եղեր իւր անշահ ծրագրին դործադրութեան (պէտք է դիտել որ Ֆաղ· ժողովոյ անդամք Երեսփ· ժողովոյ անդամ ալ են) իբր Երեսփ· ժողովոյ

անդամ, առանց պատճառի լուծել Սահմանադրական ժողովրդին, որպէս պի չվճարեն տարեկան 50 լիրան, և յաջորդ կարգելով նոցա, նախ իւր անդամներէն մին, և ապա փոքրիկ բացառութեամբ, իրենց արբանեակները, որպէս պի դոնէ այս անդամ առանց հրապարակէն խոյս տալու կարենան գործադրել իրենց ծրագիրը։

Տեղւոյն երեսփ. ժողովոյն համար ալ լաւ չէին խօսեր, կ'ըսէին թէ ժողովոյն չրջանը արդէն դրեթէ աւարտած և անդամից մի մասը պակասած է, փոխանակ, ըստ օրինի, նորոգ ընտրութիւնն կատարելու, անդամներէն ոմանք ոտի ի բուն կ'աշխատին որ նոր ընտրութիւնն չ'կատարուի, լաւ համոզուած ըլլալով անոնք թէ՝ հոն աթոռ ունենալու բաղդէն պիտի զրկուին այլ ևս, և թէ պարագայէն օգուտ քաղել ուզելով և իրենց անդամակցութեան փափաքը լաւ մը յայտնելու նպատակաւ, վերջերս հեռագիրէ 3–4 օր նախ ըրած են առանց Մարզուանի և ուրիշ բացակայ երեսփոխանաց հրաւէր դրելու։ Այսպիսի դաշտագողի նստերուն և չորս աւուրց չարաչար աքնութեան արդիւնքն է «Լաճնաճ Տնտեսական Ընկերութ» որ սակայն կը բողոքէ և իրաւամբ բացատրութիւն կը պահանջէ եղեր իր լուծման պատճառներուն վրայ։

Ասա ևս կաթողիկոսական ընտրութեան համար աչխարհական պատգամաւոր ընտրուած է եղեր մէկը որուն անունը չեմ յիշեր, միայն կ'ըսէին թէ Ազգային վիճակն մի և նոյն է ամենուրեք, դի չատերը Ազգային սնտուկին անձկութենէն օգուտ քաղած են, ընտրուած են աւելի դրամական զօրութեամբ քան արժանաւորութեամբ։

Ա՛ռ այժմ այսչափն բաւական համարելով՝ կը խոստանամ ապագային ալ դրել, եթէ երբէք Ամասիա հանդիպելու պատեհութիւնն ունենամ։

24 Ապրիլ 1892
Ամասիա

Անդրդ Ը

ՄՏԱՒԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԼԻՆՏԱ

Իր աչերն հրաչէկ ածուխի զոյգ մը վառարաններ են, երբ վերտեան կուսանք մչտնջենապէս վառ պահելու սահմանեալ էին իրենց յանձնուած կրակին, Լինտա ևս, թէև տասը քառեակ գարուններու կոյտ՝ վառ պահած է իր աչերու չողուն բոցն, Անդարդ, պարզ, միաձև և միշտ անփոփ՝ կ'ոլորին նազելի գըլխուն վրայ իր մազերն: Անդ չկայ ո՛չ ոսկի և ո՛չ ադամանդ, բայց իրենց ոլորապտոյտ գիսակին ստուերին տակ՝ կ'արձակեն պենկալեան նուագուն ու սոզուն թեթև նչոյլներ, նման ելեկտրական լուսոյ հոսանուտին, որ կ'բեկբեկին նէրա սաթի նման սև նրբաթել մազերէն՝ պարգևելով դիտողին ալլուն լուսոյ կայծեր:

Պրկուն են Լինտաի չրթերն, երբ միայնակ անկիւն մը մեկուսի քաշուած կ'մտածէ, մտածում՝ որ աւելի երազի մը կ'նըմանին: Կ'ջանայ աքօղել իր մտքին մէջ տիրող փոթորիկներն, որ անչուշտ անգնելոյն անուշութեանց անստուեր յիշատակներն են և ներկային տարիներու բեռին տակ իր սրտի կրած անյուսալի այլ անհուն վիշտերուն անդրժելի ապացոյցները:

Այս տեսակ վայրկեաններ ստէպ կ'ունենայ Լինտա, մեայլ մը կ'սահի իր ձիւնափայլ ճակտին վրայ, վար կ'խոնարհին իր երկայնածիր արտեւանունքներն, և թևերն ծալած կ'մտածէ, կը խորհի, մերթ զսպելով հառաչ մը, թէև անկարող աքօղելու աղի արցունքի ցօղն որ կ'սահի թեթև չունչի մը նման՝ զովացնելով իր արտեւանունքն և սթափելով Լինտան իր խոր մտմտուքէն:

Խօսուն է Լինտա, և ունի իրեն յատուկ բացատրութեան ձև մը որ մերթ հանդարտ է և անսեթևեթ և մերթ յուղեալ ու խիզախ, կարծես իր մտածմանց աւելի անկեղծ դրոշմ և համազակեր չեշտ մը տալու համար ստէպ մղում կ'տայ իր աջ ձեռքին և ձախով կ'վնտռէ իր սիրտն՝ անդ զետեղելու համար զայն, ի ցոյց դնելով ակամայ իր նուրբ ու կանոնաւոր մատներն,

որք արուեստագիտի մը նախանձը գրգռելով անոր վրձինին վերհպումն անլուռա պիտի չփոթէին։

Լինտա կ'սիրէ գրականութիւնն և կ'պարապի ընթերցմամբ։ Երբ հանգարտ է սիրտն ու յստակ իր միաքն, ականակիտ վտակի մը նման, Լինտա իր թագուն բնատուր սրամտութեամբ կարող է ընբռնելու իր կարդացածին անտեսանելի գաղափարը։ Բայց բուն հոգւոյ ջիղն, և երբ նչմարէ անդ տիրող աններդաշնակութիւն մը կամ ծուռ գաղափար մը Լինտա կծու քննադատ մը կ'դառնայ սուր դիտողութիւններով առլի։

Լինտա երբեմն անաչառ կ'խօսի ու կ'քննադատէ վիրաւորելու աստիճան, բայց նէրա անկեղծ սիրտն ի մօտուստ ճանացողին թէև ըմբռնելի, բայց անծանօթի մը ականջին անախորժ կ'հնչեն իր կծու խօսքերն։

Թէև վիճաբանիլ կ'սիրէ Լինտա, բայց այնքան հաստատամիտ է իր պաշտպանած դատին համար որ անհնար է գինք համոզելու ջանալը։ Թերևս տարիներու ամուր օղակներն պնդացուցած են նէրա փափկիկ սիրտն որով անյաղթելի ու անթափանցելի կ'մնայ վիճաբանութեան մինչև վերջն։

Ա,յո, անթափանցելի է Լինտաի սիրտն, սիրտ մը՝ որ դուռած էր աշխարհի վայելմանց առջև երբ դեռ դեռատի կոյս, սիրտ մը՝ որ պղնձեայ պատեանով ամրացած չարունակ կ'մաքառի իր մաքին դէմ, ի զուր թէև այս վերջինն կ'թափէ իր ճիգն գանելու համար այն մթադին ու խաւարին ստուերներն, որով միայն վիշտ, տառապանք ու ցաւ կ'տեսնէ նէ կենաց անապատին մէջ, վաղանցուկ ստուեր մը կ'նկատէ ուրախութիւնն, անկայուն նչոյլ մը՝ երջանկութիւնն, և նորատի երևակայութեան ծնունդ՝ յոյսն։ Լինտաի սիրտն ու միաքն այս անվերջանալի մորմոքին մէջ տարուբերելով կ'կորսուին, մին՝ հրացայտ բոցերու քաօսին, միւսն ովիէանու մթին խորութեանց տակ, վանելով այն սրտերն որք սուզելով մինչև այդ անդնդոց խորն՝ աղերսարկու կ'բանան իրենց թևերն անդ ընդունելու համար Լինտան։ Բայց աւաղ, կ'երևի թէ Լինտաի սիրտն կ'տանի յաղթանակն, յետս կ'մղուին ոչգութեամբ այդ կարկառուտ ձեռներն և Լինտա իր սիրական մեկուսացման մէջ անթափանցելի, իր ընտանեաց ու բարեկամաց անձնուէր, անոնց համար ցանկալի երջանկութեան վաստաքող ու ճգնող՝ կ'պաշտպանէ միշտ իր դատն հակառակորդի մ'առջև, տալով իր գլխուն թեթև հլկում մը դէպի ձախ և անդադար թարթելով իր աչերն, որով

կարծես կ'ուզէ սիրաշահիլ իր խօսակիցն և ստանալ նորա հաւանութիւնը։

Լինտա պատշաճութեան օրէնքին խստապահանջ դիւցուհին է թէև՝ բայց իր հպարտութիւնը համեստութեան չրջանակէն չէ ղիր։ Դիտէ աղնուականին, միջակին ու ռամկին հետ վարուելու կերպն և անոնց ամենու երակի զարկերն ի հաշիւ առնելով՝ զանոնք կ'ղեկավարէ, կ'կծէ կամ կ'արհամարհէ։

Լինտա կասկածոտ չէ, և զարմանքը կ'տանի երբ իրեն կասկածոտ ըլլալը կ'պնդեն և այս պատճառաւ շատ դիւրին է դինք խաբելն ո՛և է նորութիւն մը կամ խնդիր մ'առիթ բռնելով։ Կոյր վստահութիւն ունի Լինտա իր բարեկամայ և բարեկամուհեայ վրայ և այն հաստատ համոզումն՝ որ երբէք անոնցմէ չպիտի խաբուի կամ մուացման մատնուի։

Լինտա խիստ հետաքրքիր է, և իր այդ բնաւորութիւնը գրեթէ իրր պիտոյք իր վրայ կ'իշխէ, բայց ո՛և է գաղտնիք նէ՝ բա վստահելու աստիճան աւանդ ապահ կրօնուհի մ'է։

Լինտա իր բարեկամաց չրջանակին մէջ վճռող ձայն ունի։ նէ կ'արձակէ վերջին վճիռն ո՛և է ծանրակշիռ հարցի մ'առջև, չպարծիր փաստաբանել և կ'արհամարհէ այն խօսակցութիւնն որ իր ուղիղ չափէն չեղեցնելով կ'ուզուի բծախնդրութեամբ իրաւունք չտիլ, իր դատաւորն իր սիրան է, անոր վրայ յենլով հազիւ կ'տատամսի մի քանի մանրերրորդ և ահա արձակած է Լինտա իր վճիռն։

Բայց և այնպէս Լինտաի անցեալը գաղտնիք մ'է, կ'ուզի անոր ստուերին ու մութ անծանօթի ծոցն, անցեալն վրայ ո՛և է անուղղակի հետաքրքիր հարցման առջև խոյս կ'տայ Լինտա կամ կ'պատասխանէ Սիսիլլօրէն։

Ի՞նչ է ուրեմն Լինտա. քրմուհի՞ մը թէ աչխարհասէր դերձակ մը, աչխարհի վայելքանց անտարբեր կո՞յս մը՝ թէ բաղդի ընկեցիկ մի աղջիկն. իր ընտանեաց զոհուելու համար երկնաւոր հրեշտակ մը՝ թէ անզգայ ու սառն սիրտ մը. չ'գ, ո՞վ գիտէ՝ թերևս ոչ մին և ոչ միւսն է, թերևս Լինտա խնչալի մը զոհն է, թերևս նուիրական կրակի մը հաւատարիմ ասանդապահն է, որ անձնազոհութեան, անձնուիրութեան և բարեգործութեան մէջ կեդրոնացնելով իր նեն կ'ջանայ զուլացնել իր սիրտն ու մոխրի տակ ծածկել իր հուրն . . . ։

ՎԱՐՈՒԺԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլ., 25 Մայ. 1892

Բաբէկա՛, ձմեռդ ալ կայ գարնդ ալ։ Այժմ ուղևորու-թիւնն ոչ միայն դաստիարակութեան մի կարևոր մասը կ'կազմէ, այլ և պատմութեան լուսաբեր մի տարրը, մի յաւելուածը կը նկատուի։ Վիպասան, պատմաբան, բնաւորան, կենդանաբան, մարդաբան, սիրաբան և ուրիշ շատ բաներ չարունակ կ'ճամբորդեն, որ իրենց գործերուն տեղական, բնաւոր, ճշդրիտ գոյն տան և գիտակցութեամբ խօսին, մտօրհով համոզեն։ Բայց եթէ ուղևորութիւնը կրնայ բերել լոյս, կ'բերէ նաև խաւար, կ'բերէ թիւր ըմբռնումներ և յղացումներ այնպիսի իրերու և արարածներու վրայ որ եթէ լեզու ունենային անտարակոյս պիտի բողոքէին այդ անհարազատ նկարագիրներուն դէմ։ Արդէն գիտես թէ լուսաւոր Եւրոպա ինչ հիացմամբ կլլած է աւազակներ տար ալխարհներու դրից, սովորութեանց և բարուց վրայ, ինչ թևաւոր սուտեր իրրև ճշմարիտ եռանդագին ընդունուած է ի չնորհս բաղդախնդիր և անչահ ճամբորդներու, և ապա հետզհետէ դուրս հանած է այդ սուտերն, երբ հասուն և մտածական քննութեան լուծողական դեղերն սկսած է առնուլ։ Գիրքդ ատկէ հատած չէ տակաւին ստոյգն, պոռոտախօս ճամբորդներու ցեղը մինչ վէրնի արտակերտրոն վկայերն ինքնահնար ուղևորական հրէշներու մտա ածուտարան են։

Եւ ուսանի՛ է այդ տարբերութիւնն ստուգաբանութեամ և աբստրակտութեան մէջ։ Գրագէտ ուղևորին դրածն ակնոցէն, որ կրնայ լինիլ դունաւոր կամ անգոյն, դոգաւոր կամ գմբեթարձր, հատուածակողմեան կամ հեռադիտական։ Մի և նոյն տեսարանը, մի և նոյն իրողութիւնը, մի և նոյն պատկերը տարբեր աչքեր տարբեր գոյներով կրնան նկարագրել։ Մտային գործարանը կրնայ ունենալ տեսողական գործարանին պէս իր պատրանքն։ Այս ուղևորն ունի վառ երևակայութիւն, այն հասուն դիտողութեան ոգին։ այս, թէև դրական ու բնաբանական դպրոցին աշակերտը լինելով կ'պարծի, բայց կատարեալ երազատես մ'է և անուրջներու թևերով կ'սաւառնի օդա-

յին աշխարհ մը, և ըստ հաճոյս կ'հնարէ, կ'ստեղծէ ինչ որ իրա-
կանութեան մէջ անուն չունի: Ամեն ինչ մեծ, վեհ, հսկայ կ'ե-
րեւի իր աչքին, մեկ մ'ուզեմ հասակն, բլուր մը Հիմալայայի
համեմատութիւնները կ'առնուս այն, թէև միայնոն դրիչ, երկ-
րաչափի ճշդութիւնն ունի, կ'չօշափէ, կ'քննէ, կ'պարփակէ իր
հետազնին մաքին բովին մէջ քննելի իրն, կ'մեղմէ, կ'ամոքէ
ամեն ինչ որ ի սկզբան չափաւոր կ'պատճառէր և կ'չանայ չէ թէ
իրերու արտաքին փայլն այլ նիւթն, ներքին ոգին, ծուծը վեր
հանել: Վիր կշռին մի կողմն բանահիւսական աւիւն, կիրք, նա-
խապաշարում, փառամոլութիւն, դիր միւս կողմն ճշմարտախո-
րութիւն, գիտութիւն և տարրերութիւնը կ'գտնես այս և այն
ճամբորդին գրուածներուն մէջ: Իսկ երբ անճուկ կուսակցու-
թեան մը չունչն ալ միանայ, երբ կանխակալ ոգի մը կամ նը-
պատակ մը տուն տայ ուղեւորին, այն ժամանակ անջրպետն ի-
րողութեան և երեւոյթին մէջ այնքան կ'լայննայ որ գրողին ու-
նայնամտութիւնն էին և չէին մէջ անոգի դարան մը եղկարա-
ցած արունքին պէս կ'տատանի:

Եթէ կայ սակայն զարմանալի կէտ մը, այս է որ արևելեան
պայծառ արևուն և յստակ երկինց ներքև մերթ ընդ մեր կ'ե-
րեւին եւրոպացի ճամբորդներ որ կարծես թէ ոչ միայն իրենց
աչքի այլ և մաքի լոյսն ալ կ'կորուսեն և գոյները զանազանելու
միտքին անկարող կ'գանուին: Ամեն ինչ մութ, ամեն ինչ ստո-
րին, ամեն ինչ քայքայուն միմակի մէջ կ'երեւակայեն, և այս
բաւական չհամարելով՝ կ'արհամարհեն կ'անարգեն ինչ որ արե-
ւելեան է, ինչ որ հին, նահապետական սովորութիւն է, ինչ որ
չարքաշ, տկուն և գործունի ժողովուրդ մ'է, ինչ որ վերջապէս
հնամի քաղաքակրթութեան բեկորները թէև, ցարդ անալու հա-
կամէտ է, քանալով հեռի մնալ այն ամեն մոլորութիւններէն և
մեղութիւններէն որ եւրոպական դեղնորակ և ժահահոտ կազե-
րուն և ստուերներուն և միևչև անգամ ոսկեզոյն և նկարա-
զարդ ձեղուններուն չուքին ներքև կ'ստղոսկին: Խարուց պար-
զութիւն, անմեղութիւն, ընտանեկան սրբութիւն, հաւատար-
մութիւն և պարկեշտութիւն անխնամ բաներ են այնպիսի ու-
ղեւորներու համար, որ կ'յուսան հանդ իսկիլ իրենց թափառիկ
ընթացքին մէջ լուսափայլ սալօններու, չզարուն դէմքերու և
մոլորուն տեսիլներուն:

Ինչ սիրան ըսէիր, բարեկամ, եթէ տեսնէիր անձ մ'որ ա-
տելութեամբ ուրիշներուն դէմ դրդուած, բերնին եկած լու-

տանքը թաւիէր անոնց գլխուն: Անշուշտ պիտի գոչէիր թէ յիմար է այն, կամ մարդատեաց մ'է, կամ ինքնամոլ ապուշ մ'է — և պիտի ըսէիր որ եթէ ոչ մարդասիրութեան դէմ ընկերութեան նշոյլը չլուսաւորեր այդ խաւարային սիրտը: Միւս կողմէ՝ ինչպէ՞ս պիտի սահմանէիր այն մարդն որ լուսամիտ ազգի մը ծոցէն ծնած, որ դիտութեան ու քաղաքակրթութեան կեդրոնէն մրթած, որ աղնուականութեան ոգեզօսով մեծացած, որ չքաղցնեներով փառապանծ, ելնէր նախատինք, հայհոյանք, զրպարտութիւն սեզար խեղճ ժողովրդեան մը վրայ, որու էական յատկանիշներն են և միանգամայն պարծանքն, ընտանեսիրութիւն, կրօնասիրութիւն, համերաւթիւն, հաւատարմութիւն, աշխատասիրութիւն: Ի՛նչ, պիտի զայրանայիր և պիտի ըսէիր անշուշտ որ այդ մարդն պարզապէս անխիղճ ապատած մ'է, որու վրայ եւրոպական լոյս, ելեկտրական լոյս, ճըշմարտութեան լոյս երբէք ներգործութիւն չեն ունեցեր, և մէկ միայն իր կանխակալ ոգւոյն, իր կրից կամ իր մեծատարներուն գոհացում տալու համար կ'կատարէ անշուք, անյարմ պաշտօն մը, և կարծես թէ ի փառս Աստուծոյ կ'կատարէ, ինչպէս երբեմն հաւատաքննիչները խղճի անդորրութեամբ անմեղները ի սուր և ի հուր կ'մատնէին:

Կ'ըսեն թէ այս դիտական, դրական, լրագրական, հեռագրական դարուս մէջ ամեն ինչ ճշմարտութեան լուսով կ'քննուի, թէ ստութիւնն երեսը կ'պահէ, և եթէ երեսն դայ խակոյն դըժոխք կ'լինի, և սակայն ահա ուշադիր մը որ, իմացածիս նայելով, մեր մէջ սիրայիր ընդունելութիւն մը վայելելէն ետև ուր որ օթևաններ է, կ'համարձակի ոչ միայն իր ասպնջականներուն վրայ արատ դնել այլ և այնպիսի լուրեր ու տեղեկութիւններ տալել որ միայն իր կրից ու երևակայութեան մէջ դոյութիւն ունին: Իր դիտումներն ու դատումները թէ երկրին և թէ ժողովրդեան վրայ կարծես ներշնչուած են այն ոգւով որ կ'ներշնչէն մեր մէջ օտար կրօնի ծաւալման գործակատարներ: Մեր նախապաշարեալ ճամբորդը կ'տեսնէ բերրի ու մշակեալ հողեր, ժիր ու սակաւապետ ժողովուրդներ՝ որ մեր վեհափառ Սուլթանին լուսաւոր հովանւոյն ներքև հանգարտ և անդորր կեանք մը կ'վարեն, կ'քննէ այն անտեսական, նիւթական, առևտրական ու կրթական զարգացումներն որ նորին վեհափառութեան շնորհարեր գահակալութենէ ի վեր մանաւանդ մուտ դտած են իր ընդարձակ տէրութեան ամեն կողմերը. կ'նայի որ այդ

և այլ ազգեր ի շնորհս այն կրօնական թոյլտութեան որով իրաւամբ կրնայ միշտ պարծիլ Օսմանեան չքեղ գահն քաղաքակիրթ աշխարհի առջև՝ ուր անպակաս են կրօնամոլական չարժումներ, և ապա կ'ելնէ թէ պալտոնական մարմիններ, թէ բընակիչներ, թէ յատկապէս հայքն և թէ ամեն ինչ որ իր անձուկ տեսակէտին անյարմար կ'համարի, նչաւակել, ծաղրել և այսպէս, եթէ անուն ունի գրական ասպարիզի վրայ, անհիմն և սխալ տեղեկութիւններ ծաւալել յԵրոպա իր հրատարակութեամբ։ Բարեբաղդ սակաւ անձնական վրիժու և ատելութեան ժայթումնէք չեն կարող մնըրել հասարակաց միտքն որ արևելեան իրերու և անձերու վրայ կազմած է իր համոզումն շատ աւելի մեծ և ականատես դրիչներու և ուղևորներու անկողմնակալ և սուղ ապատուր դրուածներու շնորհիւ։ Եթէ մէկ կողմէ կ'երևին Արևելք եւրոպացի ճամբորդներ՝ որ կարծելով թէ մի քանի սրտան, մի քանի ամիսուան մէջ ամեն բան քննած, ամեն բան հասկցած են և իրենց քարերն ու ալաքներն արձակելով կը մեկնին, մեւս կողմէ գտնուած են և կ'գտնուին ճամբորդներ որ խղճի մտօք կ'ուսումնասիրեն արևելեան բարք, սովորոյթ ու հիմնաբութիւններ և ամեն ինչ իրենց բնիկ գոյնով կ'ներկայեն։ Եթէ կան բակրաձիներ, կան նաև Լամարդիններ, Պայրոններ, Վօկէներ, Լէ Լեզ, որոց գնահատումները պատմական կշիռ և արդարութեան դրոշմն ունին։

Բայց բնչ հարկ ծանրանալ այս խնդրոյն վրայ։ Ինչպէս կան մեծատուններ որ խիղճ չեն ըներ խքուտրել ստորակարգ արարածներ, նոյնպէս կան ինքնահաւան և անբարտաւան ուղևորներ որ կարծես հաճոյք կ'զգան իրենց այցելած ժողովուրդներն շատ բարձրէն դիտել ու քննատանել։

ԵԱՀՆՈՒՐ

ԱՑԼ ԵՒ ԱՑԼԻՔ

Վերջնաբոյն հրատ.— Լուրեր քարայրին մէջ նորագոյն հրաշքի մը կատարուիլը հրատարակեցին մի շատ կղերական թերթերը ի Ֆրանսա, այս հակասութեանց աշխարհը։ Օրերուդ սը լա կիր

երկու անդամ կաթուածահար լինելով՝ կ'տարուի Լուրտի ջերմուկը՝ սպիտակ դխակի մը նման, անդամներն ջլատ, աչերն անլոյս։ Մէկ վայրկենի մէջ առողջութիւնը կ'գտնէ և կ'սկսի քալել այնպէս որ կարծես թէ երբէք անդամալոյծ եղած չէ։ Թող չըսեն անկրօնները որ երկնային հրաշիք դարն անցած է, կ'ըսէ Կոլոլիկ Թուդը։

Ոբոկի դեղը.— Հնդկաբնակ տիկին Ալկար դեղ մը դտած է եղեր բորոտութիւնը բուժելու։ Այդ կինը Անգլիա կ'երթայ որպէս զի այդ դեղն բժշկական ճեռնհաս իշխանութեան քննութեան ենթարկէ։ Ականատես վկաներ կ'հաստատեն թէ՝ իրօք տիկին Ալկար իր գտած նոր դեղով, որ բուսային խառնած նիւթ մ'է և ներսէն կ'առնուի, արդէն դարմանած է երկու հնդկացի ուրուկներ, որոց մին ջրային բորոտութեամբ տասն հինդ տարիէ ի վեր կ'տառապէր և միւսն հինդ տարիէ ի վեր։

Շոշ պահելու սովորութիւնը.— Պառաւ կին մը՝ Սալրա Դարդըը անուն Ֆօնէքդիքուդ նահանգին Ուիլմինկդըն քաղաքը մեռաւ այս օրերս և 20,000 ոսկի թողուց, որպէս զի շուն պահելու սովորութիւնը չնջուի։ Իր թողած կտակին զօրութեամբ՝ յիշեալ գումարին հասոյթով պիտի ներկուին Ուիլմինկդընի այն տուներն ուր բնաւ շուն մը պահուած չէ երկու տարիէ ի վեր և կամ տէրը խօսք կ'տայ որ բնաւ չպիտի պահէ։ Այս արտակեդրոն կտակարարն իր հրիտակը կ'աւարտէ այս խօսքով.— Ձկայ սովորոյթ մ'որ այնքան աղէտալի ներդործութիւն ունենայ մարդկային սեռի վրայ որքան շուն պահելու սովորութիւնը։— Այս կ'տակին դէմ անտարակոյս պիտի բողոքեր Շօրենհաւր որ աշխարհիս մէջ իրր իր փակ բարեկամը կ'նկատէր իր շունը։

Ա՛ելզրադպաշտութիւն է Հունգարիոյ.— Ամերդ ազատական տարօրինակ պատմութիւն մը կ'հասնի մեզ Հունգարիոյ Համսիյ քաղքէն։ Այս օրերս մի շատ գլխատ մարմիններ կ'գտնուին սոյն քաղքին մէջ։ Ոստիկանութեան ձեռօք քննութիւն մը կ'կոխ և կ'յայտնուի որ որբևարի կիներու նշանուած պատանիներ կատարած են այդ գլխատումները։ Մարմինները բնական մահուամբ վախճանած են. բայց որբևարիները կ'հաստատին որ եթէ երկրորդ անդամ կարգուին իրենց առաջին էրիկները երկրի վրայ պիտի երևին և իրենց նոր երջանկութիւնը պիտի պղտորեն։ Հետևապէս համոզեր են իրենց նշանածները գլխատել իրենց նախորդ սիրական ամուսինները։

Այս աւելորդապաշտութենէ կ'հետևի որ հունդարացի կիները չատ հաւատարիմ են գերեզմանէն անդին գանուղ ամուսիններուս։ Երանի՛ այն ամուսիններուն որ, թէև կենդանի, անդուխ են։

Ձմեռոյ-ընթ-ը խ։ելա- վրանը։ — Երբեմն աղեցիկ քարոզիչ մը կար Իսվա քաղքին մէջ, այլ զուրկ կրթութենէ, այնպէս որ սակաւ քերականական ծանր սխալներ կ'ընէր։ Երբ երեկոյ մ'ամբարգօրէն կ'քարոզէր ծանր նախատինք մ'ուղղեց Լինալի Մուրկյի դէմ։ Հապա թէ այդ նախատինքն չրթներէն թռաւ, որ կանկ առնելով ըսաւ.— Քաջ գիտեմ որ իմ կրթութիւնս թերի է, ի'յաւէմ որ երբ մանուկ էի լաւ դպրոցներ չկային։ Եթէ աւելի բարեբաղդ լինէի այժմ աւելի մտացի հաւատարկութեան մը մէջ պիտի քարոզէի։» Այդ մարդը ճշմարտութիւնը կ'խօսէր, — բայց կ'ըսէ այս լուրն հաղորդող ամերիկեան թերթը— վերջին անդամն էր որ կ'քարոզեր այդ եկեղեցւոյն մէջ։»

Մահուան անվրէպ նշան մը.— Աւեն աւեն սոսկալով կ'մանանք թէ իրը մեռած մարդիկ են թաղուած։ Այս մասին Ֆրանսացի նոր բժշկի մը կարծիքը նկատողութեան արժանի կ'համարուի, քանի որ մահը ստուգելու համար դարձ ի դարձ դրուած միջոցներն անբաւական եղած են։ Տոքտոր Մարդինօ անվրիպելի կ'կարծէ մեռնողին ձեռքին կամ ոտքին վրայ խարան մը բանալու փորձն, քանի մը երկվայկեան կամ մինչև բշտիկին դոյանալը կանթեղի մը բոցը նոյն տեղը բռնելով։ Եթէ խարանը հեղուկ մը կ'պարունակէ կենդանութեան նշանն է, եթէ ընդհակառակն խարանը լոկ դալարի կ'պարունակէ, կարելի է ըսել որ կեանքն ի սպառ մարած է։ Իրը բացատրութիւն Տոքտոր Մարդինօ կ'ըսէ.— Մարմին մը չէ այլ ինչ այլ անչարժ նիւթ՝ ֆիզիքական օրինաց անմիջական ներգործութեան ներքև որով ամեն տարբած հեղուկ որոշեալ տաքութեան աստիճանի մը մէջ չորի կ'դառնայ. վերնամաշկը կ'ուռի, բշտակն յառաջ կ'գայ, թէթև չրուկ մը հանելով կ'սպառի և չորին կ'խուսի։ Բայց եթէ՝ ամեն տրտաքին երևոյթի հակառակ, կենդանութեան նշոյլ մը կ'տայ, գործարանական կազմուածքն բնաթօսական օրինաց համաձայն կ'շարժի և բշտակը անշուշտ պիտի պարունակէ ջնային հիւթ, ինչպէս սովորական այրածի ժամանակ։ Փորձն այնքան պարզ է, որչափ ապացոյցը համոզական։ Ձոր խարան, մահ. հեղուկ խարան, կեանք։ Ամեն որ կրնայ ի հարկին, փորձել։

Աշխարհագրական ֆլուկտը։ — Ամերիկեան հաստատութեան վերջնա-

գոյն գիւան է փղոսկր չինել մածեալ կաթով՝ ինչպէս կ'չինեն պանիրը: Հաստատուն մասն ոսկեբօրակով կ'խառնեն և խառնուրդն կ'ենթարկեն ահագին ճնշման: Այս կերպով կարծր, տևական և փղոսկրի նման նիւթ մը կ'արտադրի որով կարելի է, կ'ըսեն, չինել սանտրեր, դնդակներ, դրչակալներ, ծխամեայ բերաններ եւ այլն:

Անդրանիկութիւն է Մէօյնէլ-Նահանգս. — Ուիլլիըմ Ադօր մեռնելով 70,000,000 տոլար թողուց: Անգլիական օրէնքին հետեւելով 60 միլիոն տոլարն իր Յակոբ որդւոյն կտակեց: Իր երեք աղջկանց իւրաքանչիւրին 2 միլիոն տոլար թողուց, իսկ այրի կնոջն 500,000 տոլարի եկամուտ մը: Այս գումարն՝ իր մահուանէ ետք, սիրոյ անցնի բարերաղդ անդրանիկ որդւոյն, ինչպէս նաև ընտանեկան հոյակապ ապարանը: Մեծ հարստութիւններ այսպիսի անիրաւ կերպով բաժնելու կերպն ցաւալի հետեւանք պիտի ունենայ Ամերիկա: Շարժուում մ'է այս հսկայական հարստութիւններ կեդրոնելու անդրանկին ձեռքը: Մի և նոյն բանն ըրին վանտէրպիլդներն, եւ ուրիշ հարուստներ ի նիւ-եօրք նոյն օրինակին հետեւելու կ'միտին: Այնպէս կ'կարծուի որ ժողովուրդ պիտի ժառանգէ այս տան մեծադոյն հարստութիւնը: Երբ ամեն մարդ իրաւունք ունի որոշեալ պայմաններով իր հարստութիւնն բաժնել ինչպէս որ կամի, անդրանկութիւնը նշանակութիւն չունի հանրավարական երկրի մը մէջ, որու հիմերը կրնան խախտիլ այդ դրութեամբ, որ այժ ունի Անգլիա, Գերմանիա: Տարրական ճշմարտութիւն մ'է ըսել որ անդրանկութեան դրութիւնն, որ դրամական աղնուապետութիւն մը կ'կազմէ, ընկերութեանց անկման պատճառ եղած է: Մարդիկ մի և նոյն նիւթէ չինուած են այսօր ինչպէս որ էին Հռոմէացւոց պետութեան ժամանակ: Իրաւամբ կ'բողոքին այն օրինաց նկատմամբ, որոց նպատակն է հարստութիւնն բարձրացնել իմացականութեան և պարկեշտութեան դէմ: Կ'բողոքեն այդ դրութեան դէմ, վասն զի ընկերութիւնն երկու դասակարգի կ'բաժնէ ամենահարուստ անձերու մեծամասնութիւն մը և ամենաղքատ անձերու մեծամասնութիւն մը: Ահա այդ դրութեան մէջ կ'գտնուի այն որմն որ անկխանութիւն և ընկերհաշտական շփոթութիւններ կ'բերէ:

ԼՐԱԲԱՂ

Պ. Սմբատ Շահազիզեանի գրական երեկոյեան շքեղ կերպով կատարուեր է ի Մոսքուա Ապրիլ 9ին. ճառեր, տաղեր, տաղեր արտասանուեր են, որոց մէջ Պ. Պերճ Պռօշեանցի ճառը ուշադրաց կողմէ ծափահարուելով երկեցս կարդացուեր է։

Հետաքրքրուեր թիւը 200ը կ'անցնի, որք ազգ. հատատասութեանց, խմբագրութեանց և այլոց կողմէ զրկուած են։

կարոզիկոսական ընտրութիւն. — Վերջապէս Մայիս 4ին վերջնական ընտրութիւն կ'կատարուի Հայոց կաթողիկոս ընտրելու համար։ 66 հոգի կ'մասնակցին, որոց 41 եկեղեցական, իսկ 25 աշխարհական պատգամաւորներ են։ Երէք հոգի երկին ձայն ունին. ընդամենը 73 քուէարկութիւն, համագումարն 87։ Թուրքահայոց պատգամաւորներէն, որ 90ի պիտի հասնէր, 18 եկեղեցական և 15 աշխարհական միայն կ'երեան Եջմիածին, թէև քանի մը գաւառներէ, ինչպես Մշոյ, Վանայ, Ալաշկերտի և այլ տեղերու պատգամաւորք Արաքս գետին յորդման պատճառաւ չեն կրնար հասնիլ։ Վեհարանի մէջ խորհրդակցութիւնք և վիճաբանութիւնք տեղի կ'ունենան. Մշակականաց ամէն յոյս ի դերև կ'երթէ, կ'աշխատին թուրքահայերու պատգամաւորներ որսալ, այլ չեն յաջողիր։ Աթթուռնի, պահապան կաւատիցութեան, խորհրդակցութեան կ'հրաւիրէ պատգամաւորներն. բայց անպատահական կ'մնայ հրաւէրն և հետևաբար Սեդրակեան Սրբազանի ընտրութիւնը չուրը կ'ընկնի։

Քառանուն ցուցակը կ'պատրաստուի։

Խրիմեան	77	քուէ
Իզմիրլեան	72	»
Մխիթարեան	72	»
Տէր Սահակեան	71	»

Վերջնական արդիւնք, կաթողիկոսացու կ'ընտրուին.

Ամեն. Խրիմեան	72	քուէ միաձայն
Գեր. Իզմիրլեան	50	»

Էջմիածին Համազգային ժողովի ընտրած կանոնաւորների ցուցակը նուիկասի Պ. կառավարչապետին ներկայացնելու համար ժողովը նշանակեց հետևեալները. Գեր. Մեսրոպ եպիսկ. Սմբատեան, Պ. Ներսէս Ամբարեկեան և Պ. Աբգար Յովհաննէսեանց Ա.Յ-Ե-Ն-ի խմբագիրն՝ որ թէ Պետրոպոլի և թէ Եգիպտոսի կողմէ պատգամաւոր ընտրուած եր։

Քաղաքական ժողովն Ռուսիոն. խորհրդ. անդամ և առևտրական ներկայացուցիչ Մեծ. Ր. Եֆ. Պերպերեան և պաշտօն առաւ անոր նոյն խորհրդին պակասալ անդամից թիւը լեցնելու։ Տ. Գ.

Խմբագիր-Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԲԱԶՄԱՎԷՊ
Ամսաթերթ Ը· ՏԱՐԻ 1892
Բաժանորդագինն է՝ 10 ֆր· (4 ր·)։ ՎԵՆԵՏԻԿ՝ Ս· Ղ.ԱԶԱՐ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ
Զ· ՏԱՐԻ 1892
Բաժանորդագինն է՝ 10 ֆրանք։ ՎԻԵՆՆԱ

ԾԱՂԻԿ
Շաբաթաթերթ
Բաժանորդագինն է՝ 50 զրշ· Կ· ՊՕԼԻՍ։

ՆՈՐ ԴԱՐ
Թ· ՏԱՐԻ
Ամենօրեայ թերթ
Տարեգինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպէկ։ ԹԻՖԼԻՍ։

ԱՐՑԱԳԱՆՁ
Օրաթերթ
ԺԸ· ՏԱՐԻ 1892
Բաժանորդագինն է՝ 10 րուբլի։ ԹԻՖԼԻՍ։

ՏԱՐԱԶ
Պատկերազարդ
Շաբաթաթերթ, Գ· ՏԱՐԻ 1892։
Բաժանորդագինն է՝ 6 րուբլի։ Արտասահման՝ 7 րուբլի։ ԹԻՖԼԻՍ

ԱՂԲԻՒՐ
Պատկերազարդ
Ամսաթերթ ԺԸ· ՏԱՐԻ 1892։
Բաժանորդագինն է 3 րուբլի։ Արտասահման՝ 4 րուբլի։ ԹԻՖԼԻՍ

ԱՐԱՔՍ
Պատկերազարդ
Վեցամսեայ Ե· ՏԱՐԻ 1892
Բաժանորդագինն է՝ 3 րուբլի, իւրաքանչիւր գիրքը կ՚արժէ՝ րուբլի 2· 50։ ԲՆԻՐԶՊՈՒՐԿ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ

Ալեւելեան Մամլոյ տարեդլխեն է Զմիւռնիոյ համար $3\frac{1}{2}$ ալթամլի մէճիտիյէ, իսկ դուրսերու համար՝ 4։

Բաժանորդագրութիւնն տարեկան է, և ցանկարէ կ՚սկսի ով որ տարուան ընթացքին մէջ բաժանորդագրուի, արդէն հրատարակեալ ամսագրերը կ՚ընդունի

Ադդ, դասատուց համար տարեդլխեն է $2\frac{1}{2}$ մէճիտ։

Խմբագրութեանս վերաբերեալ ամեն նամակ, ձեռագիր պէտք է ուղղել առ Խմբագիր-Տնօրէն Մ. Մամուրեան։

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Բաժանորդ դրուիլ ուղղը կրնայ դիմել
ՋՄԻՒՌՆԻԱ առ Խմբագիր-Տնօրէնն.
Ի՝ ՊՕԼԻՍ Մեծ. Ն. Կ. Պէրպէրեան. Լուկ Զապլէ Ֆոպուէ, 63.
» » » Տիրան Ազատեան, Կոպէ խան Թիւ 7. 8 9.
ԿԱԼԱԹԱ.
ՏՐԱՆԶԻԶՈՆ Մեծ. Դարուն Մ. Զէլինկիրեան.
ՄԱՐՍԻԼԻԱ Տ՚ևց. Մ. Միրզայեանց. M. S. Mirzayantz.
MARSEILLE.
ՄԱՆՉԵՍԹԷՐ Մեծ. Տիգրան Վարպետեան. M. Dicran
Varbetian MANCHESTER
ԿԱՐԻՆ Մեծ. Վ. Մատոյեան.
ՍԵԲԱՍՏԻԱ Մեծ. Ա. Զամպեան.
ԳԱՀԻՐԷ. Ն. Մ. Ալթաղմեան.
ԱՄԱՍԻԱ Մեծ. Յ. Սէրվենեան